ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

à±ñ »ñÏñÇ ëñï áõÙ
Ã ³ ËÇÍ Ï ³ ³ ÛÝù ³ Ý,
º í ³ ÛÝù ³ ¯Ý Ý»ñáõÙ –
á±ñ »ñÏñÇ ëñï áõÙ...
ì ²Ð²Ü î ºðÚ²Ü

**ՈՒՐԲԱԹ, 10 ՀՈՒՆԻՍԻ 2016Թ.**
№ 18 (394)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am


Մեղրի

## Համայնքների խոշորացումը նոր թափ է առնում Սյունիքում

ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի որոշմամբ փոփոխություններ են նախատեսվում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում:

Ըստ առաջարկվող փոփոխությունների՝ Մեղրու տարածաշրջանի բոլոր բնակավայրերը (Մեղրի քաղաք, Ագարակ քաղաք, Ալվանք, Այգեձոր, Գուդեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն գյուղեր) կմիավորվեն մեկ՝ Մեղրի համայնքում:

Նորաստեղծ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան 2016թ. սեպտեմբերի 18-ին:

Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման հաջորդ օրն Ագարակ, Ալվանք, Գուդեմնիս, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Մեղրի, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն համայնքների ղեկավարների եւ ավագանիների անդամների լիազորությունները կդադարեցվեն:

2

## Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւ

**Բանաձեւը, որին դեմ է քվեարկել մեկ պատգամավոր, եւս մեկը՝ ձեռնպահ, կրում է այսպիսի անվանում՝ «101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հայերի եւ մյուս քրիստոնյաների ցեղասպանության հիշատակին»:**
**Այն ներկայացրել էր իշխող խորհրդարանական մեծամասնությունը՝ Անգելա Մերկելի ՔԴՄ/ՔՍՄ ու Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության դաշինքը, ինչպես եւ Կանաչների կուսակցությունը:**

*«101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հայերի ու մյուս քրիստոնյաների ցեղասպանության (VΦlkermord) հիշատակին*

**Բունդեսթագը սահմանում է.**

Բունդեսթագը խոնարհվում է 101 տարի առաջ Օսմանյան կայսրությունում հարկադիր տեղահանության եւ ջարդերի ենթարկված հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների առջեւ:

Խորհրդարանը դատապարտում է երիտթուրքական կառավարության արարքը, որը հանգեցրեց Օսմանյան կայսրությունում հայերի գրեթե ամբողջական բնաջնջմանը: Բացի այդ, ջարդերին զոհ գնացին այլ քրիստոնյա փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ ասորիներ, խալդեր:

Երիտթուրքական կառավարության հրամանով 1915-ի ապրիլի 24-ին օսմանյան Կոստանդնուպոլսում սկսվեցին ավելի քան 1 մլն հայերի պլանավորված աքսորն ու ջարդերը: Նրանց ճակատագիրը զանգվածային բնաջնջումների, էթնիկ զտումների, վտարումների եւ, այո, ցեղասպանությունների (VΦlkermord) օրինակ է, որոնցով այդպես սարսափելիորեն


Բունդեսթագի շենքը Բեռլինում

էջ 2

## «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ անհատույց գույք

**Այս օրերին մարզի քաղաքային համայնքներում գումարված ավագանիների արտահերթ նիստերի օրակարգում ընդգրկվել էր ««Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք փոխանցելու մասին» հարցը:**

Դեռեւս 2014թ. մայիսի 19-ի ՀՀ կառավարության 511-Ա որոշմամբ ձեւակերպվել էր ՀՀ կառավարության ծրագիրը, որը ստացել էր Ազգային ժողովի հավանությունը: Նշված ծրագրի պահանջներից ելնելով՝ կայացվել էին նաեւ ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի N 883-Ն եւ 888-Ն որոշումները: 883 որոշմամբ հաստատվել էր 2014-2017թթ. համար ծրագիր, որով նախատեսվել է ՀՀ տարածքում ջրամատակարարում իրականացնող բոլոր կազմակերպությունները բերել մեկ ընդհանուր իրավական կարգավիճակի՝ մեկ միասնական կառավարչի վարձակալությանը հանձնելու նպատակով:

Կառավարությունը ցանկանում է այս եղանակով առավել արդյունավետ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն ունենալ, կնքել մեկ միասնական վարձակալության պայմանագիր՝ միասնական կառավարչի առջեւ դնելով հստակ պահանջներ, ապահովելով միասնական պայմաններ, ներդնելով սակագնային միասնական քաղաքականություն:

N 883-Ն որոշմամբ հաստատվել է պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Իսկ N 888-Ն որոշմամբ սահմանվել էր, որ Հայաստանում գործող 5 ընկերության («Երեւանջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» ՓԲԸ-եր) կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերը եւ այլ գույքը դիտարկվում են որպես միասնական գույքային համալիր, եւ տվյալ գույքի հետագա օգտագործումն ու պահպանումը 2017թ. հունվարից իրականացվում է պետական-մասնավոր գործընկերության շրջանակում՝ մեկ կառավարչի կողմից: Նշված գույքի օգտագործման իրավունքը փոխանցվում է վարձակալությամբ՝ 15 տարի ժամկետով:

Նշենք, որ «Հայջրմուղկոյուղու» 100 տոկոս բաժնեմասերը պատկանում են ՀՀ-ին:

Նիստերի ընթացքում ավագանու անդամների հնչեցրած հարցերը հիմնականում վերաբերում էին համակարգի հետագա վերահսկելիությանն ու սակագնային քաղաքականությանը:

Այսպիսով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Պետական-մասնավոր գործընկերության հետագա զարգացմանն ուղղված՝ Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 883-Ն եւ «Երեւանջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» եւ «Նոր ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպասարկվող տարածքներում պետական-մասնավոր գործընկերության ձեւը եւ ժամկետը սահմանելու մասին» թիվ 888-Ն որոշումները եւ համաձայն ՀՀ կառավարության 2016թ. ապրիլի 28-ի թիվ 16-40 արձանագրային որոշմամբ ներկայաց-

էջ 2

ՈՒՐԲԱԹ | 10 ՀՈՒՆԻՍԻ 2016Թ. | № 18 (394)



# Վարդան Դավթյան. «Յուրաքանչյուրս բարեխղճորեն կատարենք մեր առջեւ դրված խնդիրները»

**Բեռլին կատարած աշխատանքային այցի, ինչպես նաեւ մարզում իրականացվող տարածքային քաղաքականության որոշ հարցերի մասին է զրույցը Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանի հետ:**

**– Պարո՛ն Դավթյան, մայիսի 18-20-ն ընկած ժամանակահատվածում Բեռլինում մասնակցել եք ԵԱՀԿ նախագահության (ԵԱՀԿ-ում հիմա նախագահում է Գերմանիայի Դաշնությունը) կազմակերպած «Առեւտրի եւ ներդրումների զարգացմանն ուղղված փոխկապակցվածության ամրապնդում» խորագրով գործարար համաժողովին: Ինչպե՞ս կգնահատեք համաժողովի արդյունքները:**

– Ձեր նշած ժամանակահատվածում մասնակցել եմ «Առեւտրի եւ ներդրումների զարգացմանն ուղղված փոխկապակցվածության ամրապնդում» խորագրով գործարար համաժողովին, որ բավականին լուրջ միջոցառում էր: Այն նպատակ ուներ խթանել աշխարհի խոշորագույն տարածաշրջանային անվտանգության կազմակերպության ներուժի զարգացմանը եւ առավել հզորացնել նրա երկրորդ՝ տնտեսական եւ բնապահպանական ուղղությունը:

Մայիսի 19-ին Ավստրիայի փոխարտգործնախարար դոկտոր Մայքլ Լինհարտն իր ելույթում անդրադարձավ ԵԱՀԿ 2017 թվականի՝ իր երկրի նախագահության ժամանակաշրջանի գերակա ուղղություններին, այդ թվում՝ համագործակցության ամրապնդում եւ վերականգնվող էներգիայի ու կանաչ տնտեսության զարգացում ուղղությանը: Ելույթից հետո հանդիպեցինք Լինհարտին եւ տեղեկացրինք մեր մարզում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման ներկայացուցչության հետ համատեղ իրականացվող վերականգնվող էներգիայի օգտագործման հնարավորությունների հետազոտության մասին: Փոխարտգործնախարարը հայտնեց իր հետաքրքրությունը եւ առաջարկեց ավելի սերտ համագործակցել Ավստրիական զարգացման գործակալության հետ՝ այդ ծրագրերի հնարավոր իրականացման համար:

Մայիսի 20-ին՝ ԵԱՀԿ տնտեսական եւ բնապահպանական 24-րդ վեհաժողովի նախապատրաստական նիստի ժամանակ, հանդիպեցինք ԵԱՀԿ-ում Ավստրիայի ներկայացուցիչ Անդրեաս Ստադլերին, ով նույնպես ողջունեց մեր ծրագիրը՝ նշելով, որ անհրաժեշտ կլինի ԵԱՀԿ քարտուղարության հիմնավորումը ծրագրի իրականացման վերաբերյալ, որը հիմք կհանդիսանա 2017թ. ԵԱՀԿի կողմից ծրագրի իրականացմանը հնարավոր օժանդակություն ցուցաբերելու համար քննարկում կազմակերպելուն: Քննարկումների ժամանակ հանդիպեցինք նաեւ ԵԱՀԿ քարտուղարության բնապահպանական ծրագրերի ավագ խորհրդատու Էսրա Բութանրիի հետ՝ խնդրելով օժանդակություն՝ 2017թ. ծրագիրը ներկայացնելու Ավստրիական նախագահություն: Սյունիքում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման գրասենյակի համակարգող Արմեն Շահբազյանի հետ պայմանավորվեցինք ծրագիրը պատրաստելուց հետո ներկայացնել քարտուղարություն: Է.Բութանրին նշեց, որ ծրագրերի իրականացման նախադրյալ է նաեւ երկրի կառավարության՝ ծրագրին

էջ 4

## Համայնքների խոշորացումը նոր թափ է առնում Սյունիքում

էջ 1

Տաթեւի ենթաշրջանի գյուղերի միավորումից հետո Գորիսի տարածաշրջանում կձեւավորվի համայնքների խոշորացման եւս երկու փունջ:

Միանգամայն նոր տեսք կստանա Գորիս համայնքը: Այդ համայնքում կներառվեն Գորիս քաղաքը, Ակներ, Աղբուլաղ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վանանդ, Վերիշեն, Քարահունջ գյուղերը:

Տասներկու բնակավայր ընդգրկող համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան 2016թ. սեպտեմբերի 18-ին, որից հետո կդադարեցվեն մինչ այդ գործող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունն ընդունվել է ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի նիստում:

Օրենքի նույն նախագծով կձեւավորվի նաեւ Տեղ համայնքը, որի կազմի մեջ կմտնեն Տեղ, Արավուս, Խանածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր, Քարաշեն գյուղերը:

Տեղ համայնքում ՏԻՄ ընտրությունները տեղի կունենան 2016թ. սեպտեմբերի 18-ին:

Վարչատարածքային փոփոխությունների արդյունքում երբեմնի Գորիսի շրջանում կգործի երեք համայնք՝ Գորիս, Տաթեւ, Տեղ:

* * *

ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի որոշմամբ առաջարկվող վարչատարածքային փոփոխությունների նախագծում համայնքների խոշորացում է նախատեսվում նաեւ Սիսիանի տարածաշրջանի Գորայքի ենթաշրջանում:

Ըստ նախագծի՝ մեկ համայնքի մեջ կմիավորվեն Գորայք, Ծղուկ, Սառնակունք, Սպանդարյան գյուղերը:

Նորաստեղծ Գորայք համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ տեղի կունենան 2016թ. սեպտեմբերի 18-ին:

**Սեփ. լրատվություն**

## Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձեւ

էջ 1

նշանավորվեց 20-րդ դարը: Դրա հետ մեկտեղ մենք գիտակցում ենք Հոլոքոստի առանձնահատկությունը, որի համար Գերմանիան իր մեղքն ու պատասխանատվությունն է կրում:

Բունդեսթագը ցավում է Գերմանական ռեյխի անփառունակ դերի համար՝ որպես Օսմանյան կայսրության դաշնակից, որը, չնայած գերմանացի քաղաքական գործիչների եւ միսիոներների միանշանակ տեղեկություններին, ոչինչ չձեռնարկեց մարդկության դեմ այդ հանցագործությունը կանգնեցնելու համար: Բունդեսթագում հիշատակումը նաեւ առանձնահատուկ հարգանքի դրսեւորում է աշխարհի ամենահին քրիստոնյա ազգի նկատմամբ:

Բունդեսթագն ընդունում է Գերմանիայի պատմական պատասխանատվությունը:

Բունդեսթագը հարգում է ոչ միայն անասելի դաժան հանցագործությանը զոհ գնացած նահատակներին, այլ նաեւ նրանց, որոնք, ավելի քան 100 տարի առաջ ծանր իրավիճակում ընդդիմանալով իրենց կառավարությանը, փրկել են հայ կանանց, երեխաներին եւ տղամարդկանց:

Բունդեսթագը կոչ է անում դաշնային կառավարությանը ուշադրություն հատկացնել 1915-ին հայերի ջարդերի եւ տեղահանությունների հիշատակմանը:

Այսպիսով՝ Գերմանիայի Բունդեսթագը Դաշնային կառավարությանը կոչ է անում

- 2015-ի ապրիլի 24-ին խորհրդարանում 100-ամյակի կապակցությամբ տեղի ունեցած քննարկումների ոգուն համահունչ շարունակել հետագա հանրային լայն քննարկումները 1915-1916թթ. հայերի զանգվածային տեղահանումների եւ բնաջնջման, ինչպես նաեւ այդ գործում Գերմանական ռեյխի ունեցած պատասխանատվության շուրջ:
- Թուրքական կողմին խթանել առերեսվել ժամանակին կատարած ջարդերի եւ տեղահանումների հետ եւ դրանով դնել հայկական կողմի հետ անհրաժեշտ հաշտեցման հիմքը:
- Շարունակել նպաստել հայերի ու թուրքերի հաշտեցմանը, որը պետք է տեղի ունենա անցյալի վերանայման, մերձեցման եւ պատմական մեղքի ներողության միջոցով:
- Շարունակել գիտական, քաղաքացիական եւ մշակութային միջոցառումները Թուրքիայում եւ Հայաստանում:
- Վերագնահատել պատմական դեպքերը, որոնց միջոցով Հայաստանն ու Թուրքիան առաջին քայլը կկատարեն դեպի հաշտեցում եւ աջակցել վաղուց հասունացած հայ-թուրքական կարգավորմանը:
- Թուրքիայի եւ Հայաստանի կառավարություններին խրախուսել շարունակել այս պահին լճացած միջպետական հարաբերությունների կարգավորման գործընթացը:
- Ջանքեր գործադրել 2009-ի ցյուրիխյան արձանագրությունները հայկական եւ թուրքական կողմից վավերացնելու համար, որոնք նախատեսում են գիտնականների հանձնաժողով ստեղծել, վերականգնել դիվանագիտական հարաբերությունները եւ բացել սահմանները:
- Աջակցել, որպեսզի Թուրքիայի Հանրապետությունում սկսված հայկական հուշարձանների պահպանման գործընթացը շարունակվի եւ ինտենսիվանա:
- Ֆինանսական հնարավորությունների շրջանակներում շարունակել Գերմանիայում գիտական, մշակութային եւ քաղաքացիական հասարակության ոլորտում նախագծերի եւ նախաձեռնությունների աջակցությունը, որոնք վերաբերում են 1915-1916թթ. իրադարձություններին»:

■

## Բուհերում ավարտվել է դիմորդների փաստաթղթերի ընդունումը

Հունիսի 1-ին Սյունիքի մարզի պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ավարտվեց 2016-17 ուտարվա համար դիմորդների փաստաթղթերի ընդունումը:

Գորիսի պետական համալսարան է դիմել 130 հոգի: Այդ կրթօջախում ուսուցանվող 9 մասնագիտության համար հատկացված է 228 անվճար եւ վճարովի տեղ:

ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղում ուսուցանվող 4 մասնագիտության համար հատկացված 78 անվճար եւ վճարովի տեղերի համար դիմել է 62 դիմորդ (10-ով ավել, քան 2015-ին):

Նշված տեղեկությունները վերաբերում են միայն առկա ուսուցմանն ու բակալավրիական կրթությանը:

**Սեփ. լրատվություն**

## «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին՝ անհատույց գույք

էջ 1

ված առաջարկության՝ Կապանի ավագանին 8 կողմ, 2 ձեռնպահ, Գորիսի ավագանին՝ 8 կողմ, Մեղրու ավագանին՝ 5 կողմ, Ագարակի ավագանին՝ 9 կողմ, Սիսիանի ավագանին՝ 4 կողմ, 2 ձեռնպահ եւ 1 դեմ ձայներով որոշեցին.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի վերոնշյալ համայնքների սեփականություն հանդիսացող գույքը՝ համայնքի ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը եւ օրվա կարգավորման ջրամբարները սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կնքել սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում նշված գույքի նվիրատվության պայմանագիր եւ լուծել տվյալ գույքի հետ կապված 2014 թվականի ապրիլի 11-ին համայնքի եւ «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության միջեւ կնքված գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը:

3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 7-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» թիվ 82-Ա որոշումը:

Ուշագրավ է փաստը, որ չնայած ավագանու նիստերն անցել են հանգիստ մթնոլորտում, բայց բնակչության շրջանում այս որոշումը ոչ միանշանակ է ընդունվել:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Լեւոն Մարգարյան. «Մեր կրթական համակարգի թույլ կողմերից մեկն էլ ուսուցիչներին մրցույթով աշխատանքի ընդունելն է»

**2015-16 ուստարվա ավարտին Կապանի N 1 հիմնական դպրոցում սովորում էր 403 աշակերտ (2014-15 ուստարում` 399 աշակերտ), 9-րդ դասարանն այս տարի կավարտի 39 աշակերտ, նախորդ տարի ավարտել է 24: Առաջին դասարան է ընդունվել 43 աշակերտ, անցյալ տարի` 51: «Դպրոցում շարժը քիչ է, այս ուստարում դպրոցից 10 աշակերտ է դուրս եկել` արտերկիր մեկնելու նպատակով, իսկ առհասարակ դպրոցից դուրս են գալիս հիմնականում բնակության վայրը փոխելու դեպքում», - պարզաբանեց տնօրեն Լեւոն Մարգարյանը:**

Չնայած իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում դպրոցների վերանորոգմանը, այնուամենայնիվ դեռեւս կան դպրոցներ, որոնք հիմնանորոգման, գույքով թարմացվելու կարիք ունեն: *«Մեր դպրոցի առաջնային խնդիրը եղել եւ ցայսօր մնում է հիմնանորոգումը: Դպրոցի ե՛ւ հատակը, ե՛ւ տանիքը, մի խոսքով` նկուղից մինչեւ դասասենյակներ նորոգման կարիք ունեն: Վերադաս մարմինները տեղյակ են խնդրի մասին, համապատասխան ուսումնասիրություններ կատարվել են, եւ լիովին վստահ եմ, որ առաջիկայում այդ խնդրին լուծում կտրվի: Դպրոցը կենսունակ օրգանիզմ է, որտեղ անընդհատ աշխատանք պիտի կատարվի. վերանորոգումը շարունակական գործընթաց է»,* – նշեց տնօրենը եւ հավելեց, որ լաբորատոր սարքավորումները նույնպես իրենց դարն ապրել են, ինչպես նաեւ դպրոցական գույքը փոխելու անհրաժեշտություն կա: Ի դեպ, դպրոցի «Դ» մասնաշենքը հատկացվել է մանկապարտեզի կառուցման համար, որ նախատեսվում է ավարտին հասցնել առաջիկա հինգ տարվա ընթացքում:

Դպրոցի հիմնանորոգումը, իհարկե, առաջնային խնդիրներից է, բայց նախեւառաջ կարեւոր է ուսուցչական համակազմը, եւ, ինչպես տնօրենը նշեց, տարին բարեբեր էր դպրոցի համար, քանի որ դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Անահիտ Մինասյանն արժանացել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչման, իսկ Կապանում ընդամենը չորս հոգի է արժանացել այդ կոչմանը: Չորս ուսուցիչ ստացել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ, ինչը վկայում է դպրոցի վարկանիշի, մանկավարժների արդյունավետ գործունեության մասին:

2015-16 ուստարվա հաջողություններից էր դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլում երեք մրցանակային տեղ գրավելը ռազմագիտություն եւ հայոց պատմություն առարկաներից: Տնօրենը վստահությամբ նշեց, որ եթե շատ առարկաներից օլիմպիադայի մասնակցությունը թույլատրվի 9-րդ դասարանի աշակերտներին, ապա մրցանակային տեղեր ավելի շատ կգրավեն: Բացի դրանից` ավագ կամ միջնակարգ դպրոցները շատ ու շատ աշակերտների օլիմպիական հաջողություններով պարտական են, նախեւառաջ, հիմնական դպրոցներին. չէ՞ որ 10-րդ դասարանի աշակերտի` վեց-յոթ ամսվա կտրվածքով ստացած գիտելիքները չեն միայն հաջողության գրավականը: Վրդովմունք է առաջացնում հատկապես այն փաստը, որ այդ հարցում հիմնական դպրոցի ներդրումն ըստ արժանվույն չի գնահատվում: Մաթեմատիկա առարկայի 5-7-րդ դասարանների օնլայն մրցույթում Կապանի տարածաշրջանի 5-րդ դասարանի աշակերտներից միայն այս դպրոցի աշակերտն է իրավունք ստացել մասնակցելու հանրապետական փուլին, որ անց է կացվել մայրաքաղաքի ֆիզմաթ դպրոցում:

«ՀՀ Աժ գավաթի խաղարկության» մրցումների մարզային փուլում 3-4-րդ դասարանները գրավել են առաջին մրցանակային տեղ, բայց հանրապետական փուլին կմասնակցի միայն 4-րդ դասարանի թիմը (հանրապետական փուլին մասնակցում են 4-րդ դասարանից սկսած):

*«Մանկավարժական կադրերի պակաս այս պահին չի զգացվում, բայց ես կարող եմ փաստել, որ Կապանում ռեզերվում չկան ֆիզիկայի, աշխարհագրության, մաթեմատիկայի եւ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ: Փոխարենը գերակշռում են դասվարները եւ անգլերենի ուսուցիչները: Ես կարծում եմ` մեր կրթական համակարգի թույլ կողմերից մեկն էլ ուսուցիչներին մրցույթով աշխատանքի ընդունելն է, եւ լավ է, որ ԿԳ նորանշանակ նախարարն այդ կարգը վերանայելու մտահղություն է հայտնել: 100 հարց անգիր անելով` դեռեւս մրցույթի մասնակցի գիտելիքների մասին լիարժեք հնարավոր չէ պատկերացում կազմել»,* – նշեց Լ.Մարգարյանը:



Տնօրենի հավաստմամբ` կենսաթոշակառու ուսուցիչների հարցն օրակարգային է բոլոր դպրոցների համար. մի կողմից երիտասարդ կադրերն են մնում առանց աշխատանքի, մյուս կողմից էլ` այդ ուսուցիչներն ի զորու են աշխատել: *«Ասենք` առաջին դասարանի վեց տարեկան երեխային պարապում է 66 տարեկան ուսուցիչը. 60 տարվա տարբերությամբ պայմանավորված` ուսուցիչն ու աշակերտն իրար գրեթե չեն հասկանում: Ճիշտ է, փորձառու են, բայց… Այսօրվա երիտասարդությունը շատ ավելի հեշտ է կարողանում ընկալել աշակետին եւ ընկալվել նրա կողմից: Կենսաթոշակի տարիքի հասած մանկավարժը պետք է մեծություն ունենա եւ ինքնակամ զիջի իր տեղը երիտասարդներին», – պարզաբանեց տնօրենը:*

Ուսուցիչների դասաժամերով ծանրաբեռնվածության մասին, կարելի է ասել, խոսք լինել չի կարող, քանի որ հիմնականում թերբեռնված են աշխատում: Դպրոցի մանկավարժներից միայն 3-4 հոգի է մեկ դրույքաչափով աշխատում: Բացի դրանից` Լ.Մարգարյանի պնդմամբ` 22 ժամ ուսուցիչը պարապում է 35 հոգանոց դասարանում, իսկ մեկ ուրիշն էլ` 3 հոգանոց դասարանում, բայց նրանց վարձատրությունը տարբեր է: Իրականում չի կարելի դասաժամի վարձատրության մեջ տարբերություն դնել, քանի որ ի՞նչ նշանակություն ունի` ուսուցիչը նույն դասը վարում է 35 հոգո՞ւ համար, թե՞ երեք: Վարձավճարի տարբերություն կարելի է սահմանել խմբակների, դասղեկության համար կամ այլ աշխատանքի:

Նորագույն մեթոդներով դասավանդելը ոչ միայն ցանկալի է, այլեւ ժամանակի հրամայականը, առանց որոնց ժամանակակից սերնդի համար դասապրոցեսը հետաքրքիր կազմակերպել հնարավոր չէ: *«Ինչ մեթոդ ուզում ես, կիրառի՛ր, միայն թե տված գիտելիքը հասանելի լինի աշակերտին. դա կլինի հին, նոր, թե չարչրկված մեթոդով, էական չէ, էականը ստեղծագործ միտք ունենալն է: Եթե ձեւական է լինելու, ապա ավելորդ է կիրառված մեթոդների մասին խոսելը: Մանկավարժության մեծագույն զենքերից մեկն էլ կրկնողությունն է»,* – նշեց Լ.Մարգարյանը:

Հանրակրթության մասին տարբեր հրապարակումներում բազմիցս անդրադարձել ենք կրթական համակարգի բազմաբնույթ խնդիրներին: Տնօրենի հավաստմամբ` ծերացած մանկավարժական համույթներում գրեթե բոլոր նորամուծություններն էլ դժգոհելու տեղիք են տալիս: Այլ հարց է, երբ ուսուցիչն ի վիճակի է լիարժեք կատարել իր առջեւ դրված խնդիրը եւ չի կատարում: Մերօրյա տեխնիկային աշակերտը լավագույնս է տիրապետում, որը դարի հրամայականն է, իսկ ավագ սերունդը դժվարությամբ է հարմարվում հատկապես տեխնիկայի արագընթաց զարգացմանը: Յուրաքանչյուր ժամանակաշրջան իր պահանջներն է թելադրում, եւ միշտ վերջին խոսքը նորին գերազանցություն ժամանակինն է. կատարված փոփոխությունը ժամանակի քննությունը կբռնի՞, թե՞ ոչ: *«Յուրաքանչյուր նորամուծություն ծնվում է դժվարությամբ, մեռնելով, տանջվելով ու տնքալով. ես նորից եմ կրկնում, ժամանակն է ցույց տալու` ճի՞շտ ճանապարհին ենք, թե՞ ոչ»,* – նշեց Լ.Մարգարյանը եւ հավելեց, որ եթե չհետեւենք միջազգային կրթական նորմերին, ապա համաշխարհային կրթական մակարդակից հետ կմնանք: Բայց երկու դիտարկում եւս, որ առաջին հայացքից թվում է ոչ առանցքային, տնօրենը կատարեց. գրքերը շատ ծանր են, եւ լավ կլիներ, եթե աշակերտները երկուական օրինակից ունենային, այդ ավելորդ ծանրությունը տնից դպրոց եւ հակառակը քարշ չտալու համար: Ուսուցչից բավականին ժամանակ է խլում նաեւ թղթավարությունը:

Լ.Մարգարյանի պնդմամբ` դպրոցն առաջընթաց սիրում է, բայց չմոռանալով պահպանողականությունը. մանկավարժության բնագավառում ունեցած հարուստ ավանդույթները պիտի կարողանանք համադրել նորօրյա պահանջների հետ: Ինչպես Եզնիկ Կողբացին է ասել, եթե չես կարող կշտամբել անարժանին, մի՛ լինիր ուսուցիչ: *«Ապրիլյան պատերազմը ցույց տվեց, որ հայրենասիրական «օլիմպիադայում» հայ զինվորը գերազանցում է բոլորին: Եվ այն մտավախությունը, որ եթե պատերազմ լինի, ներկայիս սերունդը չի կարող դիմադրել, բոլորովին չարդարացավ: Հայոց արգանդը դեռեւս չի ամլացել: Դուք պետք է տեսնեիք, թե այդ օրերին աշակերտներն ինչպես էին զգում պատերազմը, ինչ հուզիչ նամակներ են ուղարկել զինվորներին, եւ, ամենակարեւորը, թե՛ աղջիկների, թե՛ տղաների մարտական ոգին զարմացնում էր բոլորիս: Այսօրվա մեր վիճակում անոթ կլինի այն ուսուցչին, ով կհամարձակվի դժգոհել ներկայիս սերնդից: Եթե առաջադիմություն չունենանք, ազգը կգնա կործանման»,* – նշեց տնօրենը:

Խոսելով խորհրդային տարիների կրթական համակարգից` Լեւոն Մարգարյանն ընդամենը մեկ նկատառում կատարեց. հայրերը միշտ էլ քննադատել են որդիներին եւ հակառակը: Ինչ վերաբերում է այն տարիներին աշակերտների` հանրակրթության շնորհիվ ձեռք բերած գիտելիքներին, ապա այսօր էլ բնականաբար ցանկալի է, որ դպրոցից դուրս եկողը բազմակողմանի զարգացած լինի. ի՞նչ վատ է, երբ բժիշկը, բացի իր մասնագիտական առարկաներից, հավասարաչափ տիրապետի նաեւ, օրինակ, գրականություն առարկային:

2010թ.-ից Կապանի N 1 հիմնական դպրոցն իրականացնում է ներառական կրթություն (այս ուստարում դպրոցում ներառական կրթություն է ստացել 15 աշակերտ): Դժվարություններ հատկապես նախնական շրջանում առաջացել են, բայց ներկայումս շատ հարցեր լուծում են ստացել: *«Դասավանդող ուսուցչի հմտությունն ամենաառաջնայինն է, բայց կարեւոր է նաեւ ծնողների ու աշակերտների հետ տարվող հոգեբանի, սոցիալական մանկավարժի, լոգոպեդի ու հատուկ մանկավարժի արդյունավետ աշխատանքը: Անհատական ուսումնական պլանով է կարգավորվում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխայի դասապրոցեսը»,* – նշեց դպրոցի հոգեբան Արմինե Հարությունյանը: Նա փաստեց նաեւ, որ եթե երեխայի խնդիրն առաջին հայացքից տեսանելի չէ, ապա դրա մասին հիմնականում առաջինը բարձրաձայնում է ուսուցիչը: Դպրոցի` աուտիզմ ունեցող աշակերտը զգալի առաջընթաց է գրանցել. նա արդեն հանգիստ մասնակցում է դասապրոցեսին, ճանաչում շրջապատը, ազատ տեղաշարժվում դպրոցում:

Դպրոցի հոգեբանի եւ հատուկ մանկավարժ Աննա Մելքումյանի հավաստմամբ` սկզբնական շրջանում դժվար էր նաեւ ծնողներին բացատրել իրենց երեխայի խնդրի մասին, շատ հաճախ նրանք չէին ցանկանում, որ իրենց երեխան ներառվի հատուկ կարիքավորների շարքում: Բայց ներկայումս արդյունավետ աշխատանքի շնորհիվ հասել են նրան, որ ծնողներն են դիմում իրենց երեխաների խնդիրները վերացնելու հարցում աջակցելու համար: Մասնագետներին ոգեւորում է այն, երբ բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնը երեխայի կարիքը վերագնահատելիս դրական եզրակացության է գալիս, եւ երեխան այլեւս կրթության առանձնահատուկ կարիք ունեցողների մեջ չի ներառվում:

Երեխաների հետ աշխատելու համար զննական պարագաներ մասնագետներն են ստեղծում, իսկ վերապատրաստման դասընթացներ հիմնականում Կրթության ազգային ինստիտուտն է կազմակերպում, ինչպես նաեւ տարբեր հասարակական կազմակերպություններ:

*«Ուսուցչիներիս կարեւորագույն բացթողումներից կարելի է համարել այն, որ սովորեցնում ենք խոսել, բայց չենք սովորեցնում լսել: Սա երեւի նաեւ ազգային հոգեկերտվածքով է պայմանավորված: Իմ կարծիքով` այս հանգամանքի վրա պետք է ուշադրություն դարձնել` ձեւավորել լսելու կարողություն»,* – նշեց Մարգարյանը, ինչպես նաեւ հավելեց, որ ուսուցիչը քչով բավարարվող մարդ է, փոքրիկ խրախուսանքը, աշակերտի հյուլեաչափ հաջողությունը ոգեւորում են նրան. չէ՞ որ այդ ամենը նաեւ իր քրտնաջան աշխատանքի արդյունքն է:

Շնորհավորելով ուսումնական տարվա ավարտի կապակցությամբ` նա Կապանա տան (ինչպես կասեր երջանկահիշատակ Ռոբերտ Էջանանցին) ուսուցիչներին եւ աշակերտներին մաղթեց բախտաբերություն, արեւշատություն, խաղաղություն. *«Թող այլեւս պատերազմ չլինի, հայ մանուկի աչքերից երբեք տխրություն չծորա»:*

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Վարդան Դավթյան. «Յուրաքանչյուրս բարեխղճորեն կատարենք մեր առջեւ դրված խնդիրները»

էջ 2 կարեւորություն տալը եւ մասնակցությունը դրա իրականացմանը:

Թբիլիսիում հունիսին կայանալիք նախարարների խորհրդի հանդիպման ընթացքում ՀՀ կառավարության ներկայացուցիչը կինչեցնի նաեւ այդ հարցի մասին, որի համար պատրաստել ենք համապատասխան նամակ: Այն է՝ ԵՍՀԿ ծրագրերի իրականացման ներկայացուցչության օժանդակությամբ 2016թ. Սյունիքի մարզում սկսվել են իրականացվել հետազոտություններ վերականգնվող էներգիայի օգտագործման ուղղությամբ՝ մարզի մի շարք համայնքներում այն գործնականում կիրառելու նպատակով: Նախատեսվում է մշակել առնվազն 11 պիլոտային ծրագիր, որ հնարավորություն կտա խնայել հանրային ծառայությունների մատուցման համար միջոցներ, պահպանել բնությունը՝ նպաստելով համայնքների էներգետիկ անվտանգության աստիճանի բարձրացմանը: Պիլոտային ծրագրերում նախատեսվում է անդրադառնալ վերականգնվող էներգիայի միջոցով համայնքներին խմելու ջրի մատակարարմանը, կրթական, առողջապահական, համայնքային, սպորտային եւ մշակութային օբյեկտների ջեռուցմանը՝ օգտագործելով գեոթերմալ, արեւային եւ այլ վերականգնվող ռեսուրսները: Սյունիքի մարզպետարանը ներկայումս աշխատում է միջոցների (այդ թվում՝ միջազգային դոնորներից) ներգրավման ուղղությամբ: Իրականացվող աշխատանքներին օժանդակում է նաեւ ԵՍՀԿ Երեւանյան գրասենյակը, որի համար չափազանց կարեւոր են խնդրի նկատմամբ ՀՀ կառավարության շահագրգիռ վերաբերմունքն ու հետաքրքրվածությունը:

Այնպես որ՝ բեռլինյան այցս համարում եմ արդյունավետ եւ ակնկալում առաջիկայում ստանալ դրա արդյունքները:

**– Ներկայացրեք, խնդրեմ, 2016թ. մարզում նախատեսվող ծրագրերի իրականացման մասին համառոտ տեղեկատվություն:**

– Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից մարզում 2016թ. նախատեսվող ծրագրերն են՝ Ակների, Հարթաշենի, Խնձորեսկի խմելու ջրի բաշխիչ ցանցերի, Տաթեւի խմելու ջրի ներքին ցանցի, Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների եւ ջրատարի կառուցում, Նորավանի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, Հարժիսի, Քարաշենի, Կոռնիձորի դպրոցների, Որոտանի ջրընդունիչի եւ ջրատարի, Կապանի արվեստի դպրոցի, Շուռնուխի ջրամատակարարման համակարգի, Գորիսի Սերո Խանզադյանի տուն-թանգարանի վերակառուցում: Նշված համայնքները ծրագրի իրականացման համար 4-10% համաներդրում պիտի կատարեն, ինչը վերոնշյալ համայնքներից ոչ բոլորն են ի վիճակի: Ծրագրերի իրագործման ուղղությամբ որոշակի աշխատանքներ մարզպետարանն իրականացնում է: Մարզպետարանի եւ ԵՍՀԿ գրասենյակի հետ համատեղ նախաձեռնում ենք իրականացնել աշխարհագրական տեղեկատվական համակարգի ներդրման ծրագիր, որ հանրապետությունում նախադեպը չունի: Սա օպերատիվ կառավարման համակարգ է, որ հնարավորություն կտա տեղեկություն ստանալ տվյալ համայնքի, նրա կառույցների մասին: Ենթադրենք՝ տեղի է ունեցել ուժեղ քամի, առանց դեպքի վայր մեկնելու արդեն իսկ համակարգը հնարավորություն կտա պատկերացում կազմել վնասի մասին եւ ուղարկել համապատասխան օգնություն: Այսինքն՝ սա ծառայության օպտիմալացման, առանց լրացուցիչ մեծ ծախսերի որոշակի աշխատանքներ իրականացնելու ծրագրերից մեկն է: Համակարգը բազմաֆունկցիոնալ է եւ արդյունավետ:

2016թ. բյուջեով առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հատկացվելիք գումարի չափի մասին դեռեւս վաղ է խոսել, քանի որ դեռեւս հաստատված չէ: Քաղաքաշինության վարչությունը 26 ծրագիր է ներկայացրել, որ կառավարության հաստատման դեպքում մոտ 1 մլրդ դրամ պետք է հատկացվի մարզին: Ծրագրերը հիմնականում ներառում են մարզի համայնքների ճանապարհների ու շենքերի բակերի ասֆալտապատում, բազմաբնակարան շենքերի տանիքների ու վերելակների, տարբեր ուսումնական հաստատությունների վերանորոգում եւ այլն: Քանի դեռ հստակ չէ այդ ծրագրերի ճակատագիրը, ցանկալի չէ դրանք հասցեական նշելը: Իսկ պետբյուջեով արդեն հատկացվել է 149 մլն 217 հազար դրամ՝ մարզում չորս ծրագիր իրականացնելու համար, այն է՝ Սիսիանի Զաքար Խաչատրյանի եւ Արտաշես Հովսեփյանի անվան տուն-թանգարանի վերանորոգում, Մեղրու N1 դպրոցի հիմնանորոգում, Ագարակ քաղաքի դպրոցի նոր ուսումնական մասնաշենքի կառուցում, Կապանի Դավիթ Համբարձումյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի հատակի վերանորոգում: Մրցութային հարցերն ավարտելուց հետո անմիջապես կանցնենք շինարարական աշխատանքներին:

**– Ձեր վերահսկողությամբ, որքանով տեղյակ ենք, իրականացվում է նաեւ ներքին աուդիտը:**

– Ներքին աուդիտի նպատակն է մարզային ենթակայության կառույցներում ուսումնասիրություններ կատարել՝ ստուգելու տարածքային ստորաբաժանումների աշխատանքը, ժամանակին համապատասխան հաշվետվություններ ներկայացնելը եւ այլն: Պարբերաբար իրականացվող ստուգումների ընթացքում բոլոր ոլորտներում էլ հայտնաբերվում են թերություններ, որոնք ժամանակին ձգտում ենք վերացնել: Օրինակ՝ կրթության ոլորտի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դպրոցներում մրցութային կարգով արված գնումների գործընթացում կան թերություններ: Սա էլեկտրոնային եղանակով գնումներ իրականացնելու նոր գործընթաց է, որ որոշակի մասնագիտական հմտություններ ու կարողություններ է պահանջում: Գործը ճիշտ կազմակերպելու համար համապատասխան խորհրդատվություն ենք անցկացնում: Պարբերաբար ստուգումներ ենք անցկացնում նաեւ մարզի բժշկական կենտրոններում: Քաղաքաշինության բնագավառում հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության համար քաղաքաշինական նորմերի համապատասխանության հարցը դեռեւս շատ հաստատությունների համար օրակարգային է մնում: Նորակառույց շենքերի համար պարտադիր է, նախեւառաջ, թեքահարթակների, համապատասխան սանհանգույցների առկայությունը եւ այլն: Սպասարկման կենտրոններում գոնե առաջին հարկի ֆիզիկական մատչելիությունը պիտի ապահովված լինի: Բավականին լուրջ աշխատանքներ իրականացվում են, բայց դրանք դեռեւս բավարար չեն այս հարցի վերջնական լուծման համար: Բացի հաշմանդամություն ունեցող անձանցից՝ կարեւոր են նաեւ մանկասայլակների, հետիոտնի անցման մատչելիության եւ մի շարք այլ հարցեր: Մեր նախաձեռնությամբ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական հարցերով արագ արձագանքման համար թեժ գիծ է գործում:

**– Ի՞նչ կասեք կրթության ոլորտում ներկայումս իրականացվող աշխատանքների մասին:**

– Մարզի 40-ից ավելի դպրոցներում իրականացվում է «Տաք սնունդ» ծրագիրը, որի ընդլայնման ուղղությամբ տարբեր աշխատանքներ ենք կատարել: ՌԴ-ից դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչներ այցելեցին մարզ եւ բարձր գնահատեցին ծրագրի իրականացման որակը՝ պատրաստակամություն հայտնելով Տամբով քաղաքում վերապատրաստման դասընթացներ անցկացնել տնօրենների, խոհարարների համար: Նախատեսվում է նաեւ առանձին տարածաշրջաններում ուսուցման կենտրոններ ստեղծել, որտեղ հնարավոր կլինի խորհրդատվություն կազմակերպել խոհարարների համար՝ ծրագրի շրջանակներում տրամադրվող սննդի չափաքանակի, կալորիականության եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ: ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի շրջանակներում շահագրգիռ անձանց մի մասը՝ մարզի տարածքում, մյուս մասը՝ Արտաշատում, որտեղ ավելի վաղ է սկսվել իրականացվել այդ ծրագիրը, մասնակցել են փորձի փոխանակման դասընթացների:

Մարզպետ Սուրեն Խաչատրյանը շատ է կարեւորում կրթության կազմակերպման արդյունավետ գործընթացը: 2015-16 ուստարում դպրոցականների առարկայական օլիմպիադայում մարզից 43 մրցանակային տեղ ունենք, որից՝ տարբեր կարգի 25 դիպլոմ: Ոսկե մեդալի շատ հավակնորդներ ունենք: Այս տարի Կապանի N2 ավագ դպրոցի սան Աննա Ավագյանը կմասնակցի Բեռլինում կայանալիք գերմաներենի միջազգային օլիմպիադային, որին մասնակցում են աշխարհի 68 երկրի ներկայացուցիչներ: Կրթության որակի բարձրացումն առաջնահերթ է բոլորիս համար, այն նաեւ սյունեցու համար պատվի հարց է, մեր մարզի ներկայացուցիչն իր գիտելիքներով կարծես այցեքարտ լինի, եւ մենք իրավունք չունենք աչքաթող անել հանրակրթության ոլորտը:

Քանի որ արդեն ավարտվել են վերջին դասի միջոցառումները, պետք է արձանագրեմ, որ դրանք հնարավորինս համեստ կազմակերպելու մեր հորդորները հասան իրենց նպատակին:

**– Ընտանիքի, կանանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առհասարակ ինչպիսի՞ աշխատանքներ եք կատարում:**

– Օրերս նշվեց երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը: Առիթից օգտվելով՝ շնորհավորում եմ բոլոր մանուկներին, ցանկանում, որ մանկության մոլորակում, իրենց պայծառ, լուսավոր հոգիներում միշտ լույս, կրակ եւ վառվռուն ժպիտներ լինեն, իսկ մեր գործունեությունն ու ընդունած որոշումները նպատակաուղղված են նրանց ապագային: Մեծերը միշտ էլ փոքրերի կյանքը հարմարավետ դարձնելու պարտավորություն ունեն. այս իմաստով երեխաների սոցիալական ապահովության երաշխիքների ստեղծումը մարզպետարանի ուշադրության կենտրոնում է: Սոցիալական աջակցության մշտական հանձնաժողովի վերջին նիստում հավանություն տվեցինք առանց ծնողական խնամքի մարզի երեխաներից, թվով՝ 15 հոգու, տոնի առթիվ յուրաքանչյուրին 20 հազարական, իսկ քառօրյա պատերազմում զոհված ազատամարտիկների երկու անչափահաս երեխայի՝ 50 հազարական դրամ հատկացնել: Ընտանիքի միջազգային օրվա առթիվ (մայիսի 15-ին) մարզպետի օգնական Վիկտորյա Դավթյանը մարզպետի կողմից տասներկու անապահով ընտանիքի դրամական աջակցություն ու նվերներ հանձնեց:

**– Որո՞նք են մարզի առջեւ ծառացած խնդիրները, որոնց լուծման հեռանկարները մշուշոտ են:**

– Յուրաքանչյուր բնագավառում, ինչքան էլ աշխատանքներ կատարենք, միեւնույնն է, լուծում պահանջող խնդիրներ շարունակում են լինել: Բայց, ինչպես հանրապետության մյուս մարզերում, մեր մարզում նույնպես առաջնայինը մնում է բնակչության զբաղվածության հարցը, եւ այդ առումով որոշակի աշխատանքներ կատարվում են. օրինակ՝ Կապանի պահածոների գործարանի բացում, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնների վերամշակման գործարանի հնարավոր կառուցում, որոշ համայնքներում փոքրիկ արտադրամասերի հիմնում եւ այլն: Ես նաեւ սոցիալական աջակցության հանձնաժողովի անդամ եմ, որի նիստերում պարբերաբար քննարկում ենք մարզի քաղաքացիների դիմումները, որոնք հիմնականում ֆինանսական օժանդակության, առողջության, աշխատանքի տեղավորման հետ են կապված: Աշխատանքի տեղավորման համար հիմնականում դիմում են հանքարդյունաբերական ձեռնարկություններում աշխատանքի ընդունվելու ակնկալիքով: Բացի դրանից՝ նաեւ մարզի համայնքներում, մարզպետի նախաձեռնությամբ, հավաքել ենք բարձրագույն կրթություն ունեցող անձանց տվյալները, որպեսզի աշխատատեղ բացվելու դեպքում առաջնահերթությունը տանք տեղի կադրերին:

Վերոնշյալ ծրագրերը նույնպես մարզում բավականին խնդիրներ կլուծեն՝ դպրոցաշինության, ջրատար ցանցերի հիմնանորոգման եւ այլն: Բավականին լուրջ ծրագրի իրականացումը, այն է՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը մարզում, ենթադրում է նոր, շենքային համապատասխան պայմաններով սոցիալական բազմաբնույթ ծառայությունների համախմբում մեկ հարկի տակ՝ մեկ պատուհանի սպասարկման սկզբունքով: Ծառայություններ կիրականացնեն սոցիալական աջակցության տարածքային, զբաղվածության, բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնները, կենսաթոշակային ապահովման հիմնադրամը եւ այլն: Բնակիչը մեկ դիմումով կներկայացնի խնդրի մասին, ինչպես օրինակ, սոցիալական մեկուսացվածությունը, կոնֆլիկտն ընտանիքում եւ այլն, ու համապատասխան կառույցները հնարավորության սահմաններում կլուծեն խնդիրը: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը համագործակցության համաձայնագիր է ստորագրել տարբեր կազմակերպությունների հետ, նմանատիպ համաձայնագիր կստորագրի նաեւ մարզպետարանը տարբեր անհատների, կազմակերպությունների, պետական կառավարման մարմինների հետ, որոնք պատրաստակամություն կհայտնեն կյանքի դժվարին իրավիճակում գտնվող մարդու խնդիրը լուծել համալիր՝ ինտեգրված սոցիալական ծառայությունների առաջարկած մոդելով: Դեռեւս քննարկման եւ ուսումնասիրության փուլում է նաեւ Սիսիանի, Գորիսի գիշերօթիկ դպրոցների, Կապանի խնամքի կենտրոնը տարածքային հոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնների վերածելու ծրագիրը:

**– Մարզի համայնքները 2015թ. սեփական եկամուտների հավաքման գործում առաջատարներից էին:**

– 2015թ. արդյունքներով համայնքների եկամուտների հավաքման գործում հանրապետությունում Սյունիքի մարզը լավագույնն էր, եւ դա՝ մարզպետ Սուրեն Խաչատրյանի պահանջկոտության, հստակ ժամանակացույց կազմելու եւ ամենօրյա մեր աշխատանքի շնորհիվ: Եռամսյակային կտրվածքով ամփոփում ենք համայնքների եկամուտների հավաքման գործընթացը, հետ մնացող համայնքներում կատարում որոշակի աշխատանք: Ընդհանուր առմամբ խնդիրները շատ են, որոնց լուծման բնականոն ընթացքին խանգարում են անսպասելի առաջացող հարցերը:

**– Դուք համակարգում եք նաեւ տրանսպորտի բնագավառը: Ինչպիսի՞ն է պատկերն այդ առումով մարզում:**

– Տրանսպորտային երթուղիների համար պարբերաբար անց են կացվում մրցույթներ՝ որոշակի չափորոշիչներին համապատասխան: Ցանկություն կա, իհարկե, դրանք հարմարեցնել նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց, բայց, ինչպես գիտեք, նմանատիպ տրանսպորտային միջոցներ միայն մայրաքաղաքում կան: Երթուղիներ իրականացնող կազմակերպությունները մասնավոր են եւ մեծ հնարավորություններ չունեն, բայց պարբերաբար թարմացնելու որոշակի աշխատանքներ կարողանում են կատարել:

**– Մարզում նոր շենք կառուցելու ծրագրեր չե՞ն նախատեսվում:**

– Ինչ վերաբերում է բնակարանաշինությանը, ապա մոտ ապագայում նոր շենք կառուցելու ծրագիր չկա, բայց ցանկություն կա: Քաղաքաշինության վարչությունը զբաղվում է նաեւ զոհված ու վիրավոր ազատամարտիկների բնակարանային պայմանների հաշվառման հարցերով՝ բարելավման համար: Համապատասխան փաստաթղթերն ուղարկում ենք ՀՀ պաշտպանության նախարարություն, որի սոցիալական ծրագրերի շրջանակներում ամեն տարի զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներն ստանում են գումար բնակարանային պայմանները բարելավելու համար:

**– Ապրիլյան վերջին իրադարձությունների Ձեր գնահատականը:**

– Կցանկանամ, որ ժողովրդի միասնականության այն ալիքը, որին 1988թ. շարժման տարիներին ենք ականատես եղել եւ ապրիլյան վերջին իրադարձությունների ժամանակ, որ ազգային զարթոնքի, հայրենապաշտության եւ միասնականության արթնացում էր, ուղեկցի մեզ ողջ տարվա ընթացքում: Յուրաքանչյուրս բարեխղճորեն կատարենք մեր առջեւ դրված խնդիրները, որով կնպաստենք մեր բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



# Մարկոս Գրիգորյանի հավաքածուի մասին

**Հանրային հեռուստատեսության առաջին ալիքով հանդիպում էր Ե.Չարենցի անվան արվեստի ու գրականության թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանի հետ: Պատմում էր թանգարանի մասին ընդհանրապես եւ մասնավորապես ամերիկահայ նկարիչ, գորգագետ, հողարվեստի ուղղության հիմնադիր, մեծ հայրենասեր Մարկոս Գրիգորյանի պատմական եւ ժամանակակից Իրանի ցուցանմուշների հավաքածուի ցուցահանդեսի մասին:**

Օգտվելով մայրաքաղաքում լինելու հանգամանքից՝ եղա թանգարանում: Խիստ տպավորված էի այցելությունից ու այդ մասին մի քանի օր պատմում էի իմ փոքր շրջապատում: Ընկեր-բարեկամներս խորհուրդ տվեցին այդ մասին պատմել նաեւ «Սյունյաց երկրի» ընթերցողներին: Որոշեցի անսալ նրանց խորհրդին եւ այդ նպատակով երկրորդ անգամ եղա ցուցահանդեսում: Ինչպես սովորաբար նման դեպքերում է լինում, նախապես մի քանի հարց նախապատրաստեցի՝ ուղղելու ցուցահանդեսի կազմակերպիչներին: Համարյա մի ամբողջ օր էլ անցկացրի թանգարանում, շրջեցի սրահից-սրահ, մի քանիսում եղա մի քանի անգամ, բայց նոթատետրիս մեջ ոչ մի տող չգրեցի, նախապատրաստած հարցերս էլ չտվեցի: Ինչպես ասում են՝ առանց դրանց էլ ամեն ինչ պարզ էր: Մնում էր միայն գրիչ վերցնել կամ էլ նստել համակարգչի առաջ եւ ամեն ինչ հերթով-կարգով շարադրել: Թվում է, թե դրանից հեշտ բան չկա, բայց… բայց չէր ստացվում: Չգիտեի ինչից սկսել: Հա, չգիտեի ինչից սկսել, որ նախ ինձ դուր գա, հետո էլ ընթերցողիս: Մի քանի տարբերակ էի մտմտում: Բոլոր այդ տարբերակների վերջաբանը հստակ էր. խորհուրդ տալ ընթերցողներին, որ անպայման լինեն թանգարանում: Նախ, որ այն սովորական թանգարան չէ, եւ երկրորդն էլ, տարբեր առումներով ուսանելի շատ բան կա այդտեղ: Հա, վերջաբանի հարցը պարզ է, բայց ինչպես սկսել, ինչպես հասնել այդ վերջաբանին: Հո չես ասի, որ այդ ցուցահանդեսը մի մարդու աշխատանքի արդյունք է, որ բոլոր այդ ցուցանմուշները նա հավաքել է իր ամբողջ կյանքի ընթացքում, որ առանձին նմուշներ ձեռք բերելու համար վերջին միջոցներն է ներդրել: Մի բան հստակ էր. նման անհատների շնորհիվ է, որ հայրենիք, հայրենասիրություն, ազգային հպարտություն ու արժանապատվություն հասկացությունները պահպանում են իրենց դասական իմաստը:

Ո՞վ է Մարկոս Գրիգորյանը: Երբ իմացա, որ իրանահայ է, առաջին բանը, որ մտածեցի, այն էր, որ շատերի նման հավանաբար նա էլ 17-րդ դարում մայր հայրենիքից բռնագաղթածների սերնդից է: Այո, բռնագաղթածի սերնդից էր, բայց Թուրքահայաստանից, հայկական ջարդերի ժամանակ: Սկզբում նրանց ընտանիքն անցնում է Հյուսիսային Կովկաս, սակայն այդտեղ ընտանիքը երկար չի մնում: Մարկոսի ծնվելուց հետո (1925թ.) տեղափոխվում են Իրան: Նրա հայրը բարձր որակավորում ունեցող դերձակ էր, ընտանիքը նյութական միջոցների պակաս չի զգացել, որի շնորհիվ էլ Մարկոսը հնարավորություն է ունեցել հիմնավոր ու արմատական կրթություն ստանալ՝ սկզբում Իրանում, այնուհետեւ՝ Եվրոպայում. 1951-55թթ. ավարտում է Հռոմի գեղարվեստի ակադեմիան:

Մարկոս Գրիգորյանի ընտանիքը շատերի նման հերթագրվում է 1946-47թթ. հայրենադարձվելու համար: Իրանից հայրենիք դառնալ ցանկացողների թիվն այնքան մեծ է լինում, որ իրանական կառավարությունն այդ գործընթացը կազմակերպում է վիճակահանությամբ: Ինչպես ասում են, Գրիգորյանների բախտը բերում է, ճակատագիրը երես է թեքում նրանցից, ու նրանք հայրենիք չեն վերադառնում: Գիտենք, թե եկածներից շատերին ինչ դաժան կյանք էր սպասում հայրենիքում:

Աշխարհահռչակ գեղանկարիչների ու քանդակագործների հայրենիքի շունչը, գումարած ակադեմիական կրթությունը ձեւավորում են ապագա գեղանկարչին, մարդու ստեղծագործ ցանկացած աշխատանքի մեջ գեղեցիկը տեսնող ու գնահատող անհատին: Առաջ անցնելով ասենք՝ նրա արվեստի գնահատման բարձր գնահատանք է թեկուզ այն, որ Մ.Գրիգորյանի աշխատանքների ցուցահանդեսներ են կազմակերպվել Հռոմում, Միլանում, Փարիզում, Եվրոպական մի շարք այլ քաղաքներում:

Կրթությունն ավարտելուց հետո վերադառնում է Թեհրան, աշխատում ու ստեղծագործում այդտեղ, ունենում բազմաթիվ ցուցահանդեսներ: Մ.Գրիգորյանի ստեղծագործական կյանքին նվիրված կայքէջի համառոտագրված տեքստում կարդում ենք. **«Տարբեր քաղաքակրթություններ եւ սերունդներ ներկայացնող բազմաթիվ արվեստագետներ՝ Նամի, Քալանթարի (Իրան), Անսելմո Քիֆր (Գերմանիա) եւ այլք, իրենց համարում են Մարկոս Գրիգորյանի աշակերտը: Նրա արվեստն արդեն կես դար համաշխարհային արվեստի իրողություն է, սակայն՝ քիչ ծանոթ հայ արվեստաբանությանը»:**

Նկարչի ստեղծագործությունները ներկայացված են Նյու-Յորքի ժամանակակից արվեստի թանգարանի, Ռոքֆելլերի հավաքածուների կազմում, Հռոմի, Թեհրանի պատկերասրահներում:

> *1993թ. Մարկոս Գրիգորյանն իր հարուստ հավաքածուն, նաեւ իր ստեղծած գեղարվեստական գործերը, կտավները նվիրաբերել է Հայաստանին: Ըստ աշխարհագրության՝ ցուցադրությունն ընդգրկում է իրանական, հայկական, եվրոպական, ամերիկյան հոգեւոր ու մշակույթի արժեքներ: Ըստ ժամանակագրության՝ նյութերը թվագրվում են Ք.ա. 4-րդ հազարամյակից մինչեւ մեր օրերը:*

Թանգարանի սրահներում ներկայացված են հոգեւոր, դեկորատիվ-կիրառական արվեստի եւ արդյունաբերական մշակույթի ցուցանմուշներ: Այստեղ ցուցանմուշներ կան, որոնց տարիքը մոտենում է 5000 տարվա (վաղ բրոնզեդարի խեցեղեն՝ Ք.ա. 3000 թվական): Ցուցահանդեսների զգալի մասը վերաբերում է իրանական տարածաշրջանի ժողովուրդների մշակույթին, կյանքին, կենցաղին: Կան ցուցանմուշներ, որոնց կիրառության մասին դժվար է պատկերացում կազմել առանց լրացուցիչ բացատրության: Նման իրերին, առարկաներին նայելիս երբեմն էլ տարակուսում ես, թե ինչու է այդ արարածը ջանք թափել նման բան ստեղծելու համար եւ որ դրանք այնպիսին են, ինչպիսին, ասենք, ծռմռված, ժանգոտ մեխը: Ես հենց այդպես մտածելիս հիշեցի մեծն Վ.Սարոյանի մի արտառոց սովորության մասին: Ասում են, նա յուրահատուկ մոտեցում է ունեցել մարդու աշխատանքի արդյունքի նկատմամբ: Ըստ նրա՝ այն ամենը, ինչ ստեղծել է մարդը, չպետք է երբեք կորչի: Ասում են նաեւ, որ այդ պատճառով էլ նա, աշխարհի որ անկյունում էլ գտնվելիս լիներ, գետնից բարձրացնում եւ իր հայտնի մակինդոժ վերարկուի գրպանների մեջ էր առնում նկատած ժանգոտ ու ծռմռված մեխերը, որոնք հետագայում հայտնվում էին Ֆրեզնոյի նրա տան փայտյա դարպասի վրա:

Նմանատիպ հոգատար վերաբերմունք է ունեցել Մ.Գրիգորյանն իր հավաքածուի նույնիսկ ամենաաննշան թվացող իրի, առարկայի նկատմամբ՝ դրանց մեջ տեսնելով հազարավոր տարիներ առաջ ապրած մարդու, արվեստագետի թափած աշխատանքը: Հարեւան, բարեկամ երկիրն ըստ արժանվույն է գնահատել նրա արվեստն ու աշխատանքը, բազմաթիվ ցուցահանդեսներ կազմակերպել երկրի մայրաքաղաքի լավագույն ցուցահանդեսներում: Այստեղ անվերապահորեն ընդունում են, որ Մարկոս Գրիգորյանն իրանական ժամանակակից արվեստի հիմնադիրն է: Այստեղ տեղին է հիշատակել, թե հարեւան երկրում ինչպիսի վերաբերմունք են ցուցաբերում օտար ազգի պատմամշակութային արժեքների, մասնավորապես հայկական նմանատիպ արժեքների նկատմամբ: Մեկ անգամ չէ, որ այստեղ պետական միջոցներ են հատկացվել հայկական եկեղեցիների նորոգման համար: Որ մեր եկեղեցական ու պատմամշակութային արժեք ներկայացնող շինությունները պահպանվում են իրանական պետության կողմից դատարկ խոսքեր չեն: Պատմական փաստ է, որ ջրաշինարարական աշխատանքներ կատարելու հետեւանքով ջրի տակ պետք է անցներ միջնադարյան վաղուց լքված եկեղեցին: Իսլամ դավանող պետությունը մեկիկ-մեկիկ համարակալել է եկեղեցու քարերը, դրանք տարանջատել ու նորից հավաքել նույն տարածքի ավելի բարձրադիր գոտում: Հիրավի նախանձելի հոգատարություն օտարի մշակութային արժեքի նկատմամբ: Բոլորովին էլ թեմայից շեղում չի լինի, եթե հարցնենք մեր մշակույթի նկատմամբ «հոգատար» վերաբերմունք ցուցադրած մեր այն հայրենակիցներին, ովքեր նույն ձեւով համարակալեցին Երեւանի բազմաթիվ շենքերի, մասնավորապես Աբովյան փողոցի շենքերի ու Շահումյանի հրապարակի վրա գտնվող ՀԿԿ Սպանդարյանի շրջկոմի շենքի քարերը՝ հետագայում դրանք նորից հավաքելու նպատակով: Այդ օրերից անցել է 10-15 տարի: Որտե՞ղ են այդ շենքերը, ասեք, մենք էլ իմանանք, իսկ եթե շենքերը չկան, քարերը գոնե պահպանվո՞ւմ են: Այո, մարդ տեսածից է սովորում: Մարկոս Գրիգորյանն այլ բան է տեսել, այլ միջավայրում են ձեւավորվել նրա ճաշակն ու վերաբերմունքը մշակութային արժեքների նկատմամբ, եթե նույնիսկ այդ արժեքներն օտարազգի են: Հայտնի խոսք կա, որեւէ մեկին վերաբերվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ վերաբերվեն:

Ես ոչ պատմաբան, ոչ հնագետ եւ ոչ էլ արվեստագետ եմ, բայց պետք չէ այդպիսին լինել, որպեսզի զգաս, թե ինչպիսի համբերություն ու … ջանքեր են պահանջվել այդ՝ հիրավի մեծ հայրենասերից՝ հավաքածուն ժողովելու, պահելու, պահպանելու ու մեզ հասցնելու համար:

**ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# «Վերածնունդ» 8-րդ միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցել էր միայն Կապանը

Մայիսի 26-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վ.Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճում տեղի ունեցավ Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի 2015-16 ուստարվա հաշվետու համերգ, որ նվիրված էր ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակին: Հայ եւ համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծագործություններով հանդես եկան դպրոցի տարբեր բաժինների լավագույն սաները, նրանցից կազմված համույթները, դպրոցի երգչախումբը, ինչպես նաեւ այդ դպրոցից Գյումրու «Վերածնունդ» միջազգային մրցույթ-փառատոնի դափնեկիրները:

Մրցույթ-փառատոնի կազմկոմիտեի անդամ Գեւորգ Նորոյանը նշեց, որ այս տարի փառատոնը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին, ինչպես նաեւ քառօրյա պատերազմում զոհվածների հիշատակին եւ սահմանին կանգնած զինվորներին:

Շնորհավորելով հաղթանակի կապակցությամբ՝ Գ.Նորոյանը մրցանակակիրներին հանձնեց դիպլոմներ, ինչպես նաեւ մանկավարժներին մաղթեց առողջություն, բարեկեցություն դեպի մեծ բեմեր սաներին ուղարկելու համար:

Ի դեպ, այս տարի Սյունիքի մարզից փառատոնին մասնակցել է միայն Կապանի չորս կրթօջախ՝ Կապանի N, N 1, 2 երաժշտական դպրոցները, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնը եւ արվեստի պետական քոլեջը:

Կապանի արվեստի պետական քոլեջից Մերի Պետրոսյանը, Լիա Գրիգորյանը կամերային անսամբլ անվանակարգում (դասատու՝ Աշոտ Խաչատրյան) արժանացել են առաջին կարգի, Հերմինե Հովհաննիսյանը (դաս.՝ Անահիտ Բաղդասարյան) ժողգործիքներ՝ քանոն անվանակարգում՝ երրորդ կարգի դափնեկրի կոչման:

Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցից Արտյոմ Սարգսյանը (վոկալ) արժանացել է առաջին կարգի (դասատու՝ Իրինա Դավիդյան), Վազգեն Սարգսյանը (ֆլեյտա, դաս.՝ Արթուր Մովսիսյան) եւ Տիգրան Քոչարյանը (դուդուկ, դաս.՝ Վաչիկ Համբարձումյան)՝ երրորդ կարգի դափնեկրի կոչման:

Կապանի Ա.Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցից Սերգեյ Հակոբյանը (դաշնամուր, դաս.՝ Ռուզաննա Ղահրամանյան) արժանացել է երրորդ կարգի դափնեկրի կոչման:

Երրորդ կարգի դափնեկրի կոչման են արժանացել նաեւ Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի պարարվեստի բաժնի սան Մարիամ Թեւանյանը (դաս.՝ Գայանե Վարդիկյան) եւ երգեցողության բաժնի սան Մարի Էլչյանը (դաս.՝ Թերեզա Հովհաննիսյան):

Փառատոնի կազմկոմիտեի անունից շնորհակալագրեր հանձնվեցին նաեւ դիպլոմներ ստացած մասնակիցների կրթօջախների տնօրեններին, ինչպես նաեւ մասնակիցներին աջակցողներին, այդ թվում՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին:

Վերջում իրենց գեղեցիկ կատարումներով հանդես եկան նաեւ մրցույթ-փառատոնի կապանցի դափնեկիրները:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Սիրո պաշարն այդ անվերջանալի է

**Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի «Գորիս» ստորաբաժանում. սա նկարչությամբ, քանդակագործությամբ, կարպետագործությամբ զբաղվել սիրող երեխաների հասցեն է: Ստորաբաժանում հաճախում են 5-16 տարեկան երեխաները: Ըստ ստորաբաժանման ղեկավար Արամ Մաշուրյանի՝ երեխաներն այստեղ իրենց իրական աշխարհն են տեսնում: Նրանք այստեղ շփվում են գեղեցիկի հետ, նրանք կարողանում են հասկանալ գեղեցիկի էությունը: Ավագ տարիքի խմբերում երեխաները ստանում են մասնագիտական գիտելիքներ: Իսկ ընդհանրապես այստեղ հաճախող երեխաները ստանում են գեղագիտական դաստիարակություն: Բոլոր խմբերում պարապում են մասնագետ կադրեր: Ի դեպ, տնօրեն Արամ Մաշուրյանը եւ կավագործության մանկավարժ Նարեկ Օրդյանն ավարտել են Երեւանի գեղարվեստի ակադեմիան:**

Վերջերս ստորաբաժանումում կատարվել են վերանորոգման աշխատանքներ՝ շենքային պայմանները բարելավելու նպատակով: Ձեռք է բերվել նաեւ որոշ գույք: Իսկ մինչեւ տարեվերջ կլուծվի ջեռուցման համակարգի հարցը: Բացի դրանից, նշում է տնօրենը, գուցե կառուցվի նաեւ 2-րդ հարկը, քանի որ այս օջախ հաճախել ցանկացող երեխաների թիվը բավականին մեծ է:

Գեղագիտական օջախի սաները հաճախ են մասնակցում տարբեր մակարդակների ցուցահանդեսների: Նրանց աշխատանքները ներկայացվել են «Սուրբ Սարգիս» թեմայով Երեւանի մանկական պատկերասրահում բացված ցուցահանդեսին: Բացի դրանից, նրանք մասնակցում են թե Գորիսում, թե մարզում կազմակերպվող ցուցահանդեսներին: Իսկ այս ցուցահանդեսը, որ կազմակերպվեց հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, շատ սպասված էր: Մոտ 200 աշխատանք էին ներկայացրել երեխաները: Վերիշենցի Արմեն Միրումյանը ցուցահանդեսին ներկայացրել էր նաեւ Սերո Խանզադյանի դիմաքանդակը: Նա սիրով այցելուներին պատմում է, թե ինչպես է կավից ծեփել մեր հայրենակցի քանդակը: Եվ այդ ստեղծագործությունը նա պատրաստել է մեծ սիրով՝ կավի հետ խառնելով սեր, կավի հետ խառնելով իր զգացմունքները:

Սխալ կլիներ ցուցահանդեսին ներկայացված որեւէ նկար, որեւէ աշխատանք առանձնացնել: Բոլոր երեխաներն էլ ձիրք ու շնորհք ունեն: Ամեն նկար ու քանդակ մանկան հոգու պոռթկում է, մաքրամաքուր զգացմունքների արտահայտություն: Ամեն աշխատանքից ծորում է խորունկ մի մեղեդի՝ ներկաներին տանելով բիբլիական մի աշխարհ, ուր կարոտ կա, խաղաղություն, սրբություն: Երեխաներն իրենց նկարների, քանդակների, կարպետների վրա իրենց հոգու մաքրության, անկեղծության դրոշմն են թողել: Ու չես կարողանում անտարբեր անցնել որեւէ աշխատանքի կողքով, չմանկանալ, չարբենալ ու չվայելել պահի պարգեւած բերկրանքը: Եվ հնչում են շնորհավորանքի, շնորհակալության խոսքեր: Իսկ այդ խոսքերի հեղինակներն են Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը, Հ. Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնի գլխավոր տնօրեն Լեւոն Իգիթյանը, ստորաբաժանման ղեկավար Արամ Մաշուրյանը, Սյունիքի նկարիչների միության նախագահ Ժիրայր Մարտիրոսյանը, Գորիսի պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Համլետ Հարությունյանը:

Այս ցուցահանդեսը փաստեց, որ մեր երեխաների համար համակարգչից դուրս էլ աշխարհ կա: Այս աշխատանքները վկայում են, որ այստեղ պարարտ հող է ստեղծված երեխաների ինքնաարտահայտման, ինքնադրսեւորման համար: Նրանց աշխատանքներում ջերմություն կա, սեր կա: Այս գեղեցիկ հայի աչքերով երեխաների գործերում սիրո մեծ պաշար կա, անվերջանալի պաշար, որ ամբողջ մոլորակը կարող է շաղախվել սիրո մեջ: Իսկ այդ սերը երեխաների համար սահմանին կանգնած հայ զինվորն է, հայոց եռագույնը, հայոց 25-ամյա անկախությունը, հայոց աշխարհը: Գուցե եւ մեր հայրենիքը սկսվում է այս երեխաների հոգուց: Ցուցահանդեսը վկայեց նաեւ, որ մեր լինելիության ղողանջները շատ հստակ են ու ռիթմիկ:

Ցուցահանդեսը բոլորի կողմից բարձր գնահատանքի արժանացավ:

**ՆՎԱՐԴ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

Սերո Խանզադյանի անվան թիվ 6 դպրոցի կերպարվեստի ուսուցչուհի

Նկարներից նկատվեց, որ երեխաները ծանոթ են կերպարվեստի ժանրերին: Շատ պարզ, հեքիաթային մաքուր գույներով են նրանք արտահայտում իրենց զգացմունքները: Նկատվում են երեխաների ոճային առանձնահատկությունները, նրանց կողմից նյութի հասկացողությունը, նյութի ճիշտ ընկալումը: Նրանք պարզ են նկարում: Բայց այդ պարզության մեջ կա մի ամբողջ անբացատրելի տիեզերական մտածողություն, որ հատուկ է երեխաներին: Նրանց աշխատանքներում դիցաբանական տարրեր կան, ամենաhին անիմալիստական ժանր, որը պարզորոշ երեւում է հեքիաթների կենդանիները նկարելիս: Իսկ հեքիաթային դիցաբանական ժանրերը լավ արտահայտված են դիմանկարների, բնանկարների մեջ, ինչպես նաեւ հոգեւոր ստեղծագործություններում: Հետաքրքիր լուծումներ ունեն երեխաների ներկայացրած նատյուրմորտները, գծանկարները:

Կուզեի ասել նաեւ, որ որ Գորիսում գեղագիտական այս օջախի ներկայությունը շուք է տալիս մեր քաղաքին, այն Գորիսի համար անհրաժեշտություն է: Ես մեր դպրոցի աշակերտներին խորհուրդ եմ տալիս հաճախել այս կենտրոնը, որովհետեւ նրանց երեւակայության թռիչքի համար այստեղ պարարտ հող կա:

**ՅԱՇԱ ԽԱՉՅԱՆ**

ճարտարապետ

Գեղագիտական այս ստորաբաժանումը կարեւոր նշանակություն ունի ոչ միայն երեխաների, այլեւ քաղաքի համար: Ընդհանրապես, մանկական մշակութային օջախները նախանշում են քաղաքի ապագան: Նրանք չեն պատրաստում երաժիշտ երեխաներ, նկարիչ երեխաներ, նրանք գեղագիտական դաստիարակություն են տալիս երեխաներին, որը շատ կարեւոր է:

Ցուցահանդեսը ցույց տվեց ստորաբաժանման մեկ տարվա աշխատանքի արդյունքը: Պարզվեց, որ երեխաները կարող են շատ արդյունքների հասնել: Նշեմ նաեւ, որ այդտեղ աշխատում են քաղաքի լավագույն մասնագետներ: Ուղղակի շենքը փոքր է, հույս ունենանք, որ 2-րդ հարկ էլ կունենա:

Ուրախալի է տեսնել, որ Երեւանից հեռու գտնվող մեր քաղաքում երեխաները գտնվում են պետական հոգածության ներքո: Այդ երեխաների ծնողների մոտ տեսնում ես բավարարվածություն, զգացվում է, որ նրանք ուրախ են, որ իրենց երեխաները հաճախում են այս ստորաբաժանումը: Եթե այստեղ հաճախող երեխաներից մեկն էլ ընտրի այս բնագավառը, դա արդեն լուրջ առաջընթաց է:

Շնորհակալություն՝ կազմակերպիչներին, շնորհակալություն՝ երեխաներին:

Իրոք, շնորհակալություն բոլորին՝ այդ լուսավոր օրվա, ապրեցնող օրվա համար:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

**Հայտարարություն** **Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրություն (11 դասաժամ), ինֆորմատիկա (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հուլիսի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հուլիսի 12-ին՝ ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի Կապանի N10 միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 2 55 92 հեռախոսահամարով:

# Հյուր էին երաժիշտ-կատարողները

**Մայիսի 30-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճում տեղի ունեցավ «Աշոտ Խաչատրյանը ներկայացնում է» խորագիրը կրող բարեգործական համերգ՝ նվիրված Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին: Հնչեցին հայ, ռուս, արեւմտաեվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ Բախ, Շուբերտ, Վենյավսկի, Սվիրիդով, Տարականով, Ռ.Ալթունյան, Գ.Չաուշյան, Ա.Սաթունց, նաեւ հայկական ժողովրդական մեղեդիներ:**



**Աշոտ Խաչատրյան թավջութակահար, Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրենի տեղակալ**

- *Համերգը նպատակ ուներ ներկայացնելու արմատներով սյունեցի, կապանցի հանդիսատեսին նվազ ծանոթ երիտասարդ երաժիշտ-կատարողներին,* – պատմում է նախաձեռնության հեղինակ, թավջութակահար, Կապանի արվեստի պետական քոլեջի տնօրենի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, – *ինչպես նաեւ տեղացի երաժիշտ-կատարողներին՝ Մարինա Նահապետյան, Սամվել Հայրապետյան, Վիգեն Հովհաննիսյան: Կանչիս արձագանքեցին հաճույքով, քանզի մեր պարտքն էինք համարել համերգը նվիրել զոհված ազատամարտիկների հիշատակին եւ այն զինվորներին, ովքեր այսօր կանգնած են հայրենիքի պաշտպանության դիրքերում: Մինչեւ համերգը սկսվելը երաժիշտ-կատարողները բարձրացան Բաղաբուրջի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելով մերօրյա ազատամարտի զոհերի հիշատակին: Քոլեջի տնօրենության նախաձեռնությամբ կայացավ Երեւանից ժամանած երաժիշտ-կատարողների հանդիպումը կրթօջախի ուսանողների եւ դասախոսների հետ:*

Այդ երեկո հանդիսատեսը հաղորդակից եղավ բարձրարվեստ ստեղծագործությունների եւ դրանց նույնքան բարձրարվեստ կատարման: Համերգն սկսվեց Թոմազո Ալբինոնիի «Ադաջիոյով»: Հենրիկ Վենյավսկու «Լեգենդը» հնչեց Երեւանի պետական կոնսերվատորիայի երրորդ կուրսի ուսանողուհի, Կապանի արվեստի քոլեջի շրջանավարտ Արմենուշ Հովհաննիսյանի կատարմամբ (ջութակ), Ֆրանց Շուբերտի «Ավե Մարիան»՝ Սամվել Հայրապետյանի (շեփոր) եւ Աշոտ Խաչատրյանի (տրոմբոն), Յոհան Սեբաստիան Բախի «Ադաջիոն»՝ Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դոցենտ՝ Հրազդան Սարգսյանի (կլառնետ) կատարմամբ:

Վիգեն Հովհաննիսյանը դուդուկով կատարեց հորովելների շարք (փոխադրումը՝ Աշոտ Խաչատրյանի), ջութակահար Անի Փարսադանյանը՝ Բիզե-Վակսմանի «Կարմենը» (նվագակցող՝ Սվետլանա Համբարձումյան): Ի դեպ, Անին վերջերս է արժանացել ՀՀ նախագահի 2015թ. երիտասարդական մրցանակի՝ լավագույն կատարման համար՝ «Գործիքային կատարում» անվանակարգում: Աշոտ Խաչատրյանը հեղինակի հետ հանդիսատեսին հրամցրեց ՀՀ կոմպոզիտորների միության խորհրդի անդամ, երիտասարդ կոմպոզիտորների միավորման նախագահ Աշոտ Ղազարյանի «Էլեգիան»: Համերգն այնպես էր կազմակերպվել, որ հնչեին բազմազան գործիքներ. Հայկազ Կարապետյանը (օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի երաժիշտ) ալտով կատարեց Բախի «Գավոտը»:

Նաեւ նպատակ կար ոգեկոչելու մեր մեծերի հիշատակը. քանի որ վերջերս լրացել էր հայ անվանի երգեհոնահար Վահագն Ստամբոլցյանի 85-ամյակը, նրա հիշատակը հարգվեց Վահագն Ստամբոլցյանի սաներից մեկի՝ Կապանի արվեստի մանկական դպրոցի տնօրեն, արվեստի քոլեջի դասախոս Մարինա Նահապետյանի ժողովրդական «Դլե յաման» ստեղծագործության կատարմամբ: Հնչեց նաեւ Էդվարդ Միրզոյանի «Անընդհատ շարժում» ստեղծագործությունը՝ Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Վահե Փարսադանյանի կատարմամբ, ի հիշատակ կոմպոզիտորի 95-ամյակի:

Համերգին իրենց մասնակցությունն ունեցան նաեւ Կապանի արվեստի պետական քոլեջի ուսանողները եւ դասախոս Լուսինե Հարությունյանը:

Նման միջոցառումների կազմակերպումը հնարավոր չէ առանց հովանավորների եւ աջակիցների: Աշոտ Խաչատրյանը նշեց, որ համերգի հովանավորները նրա ընկերները եւ մտերիմներն են, որոնց իր խորին երախտագիտությունն է հայտնում անշահախնդիր եւ ինքնաբուխ օժանդակության համար, բայց նաեւ անուններ չի նշում, քանզի այդպես էին կամեցել վերջիններս: Հանդիսատեսը ջերմ ծափողջույններով եւ ծաղիկներով վարձատրեց կատարողներին եւ բավարարված հոգով հեռացավ համերգասրահից: Մնում է ավելացնել, որ Աշոտ Խաչատրյանը դեկտեմբերին կազմակերպել էր «Հոգու թեւերով» խորագիրը կրող միջոցառումը, եւ սա երկրորդ հաջող փորձն է համախմբելու երաժիշտ-կատարողների եւ հանդիսատեսին հրամցնելու դասական եւ ժողովրդական ստեղծագործություններ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**



## Վախճանվել է Շչորս Դավթյանը

Մայիսի լույս 26-ի գիշերը տեւական հիվանդությունից հետո մահացել է բանասիրական գիտությունների դոկտոր, լրագրող, բանաստեղծ, պատմաբան, պետական-հասարակական գործիչ Շչորս Բագրատի Դավթյանը:

Ծնվել է 1938թ. մարտի 12-ին էջմիածին քաղաքում զինվորականի ընտանիքում: Նրա ծնողները սերում են Գորիսի Արեգունի (Ազատաշեն) գյուղից:

Ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Եղել է Սիսիանի «Որոտան» թերթի խմբագիր, կուսշրջկոմի 2-րդ եւ 1-ին քարտուղար (1965-1988), ապա աշխատել է հանրապետական «Խորհրդային Հայաստան» թերթի գլխավոր խմբագիր (1988-1991): Տասնհինգ տարի (1980-1995) եղել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր: Այնուհետեւ կատարել է լրագրական, պետական ու հասարակական աշխատանք:

Պարգեւատրվել է ԽՍՀՄ, ինչպես եւ Հայաստանի Հանրապետության շքանշաններով ու մեդալներով:

Հեղինակ է մոտ քսան գրականագիտական, պատմագիտական, եկեղեցական եւ այլ գրքերի, այդ թվում՝ «Շուշի-ողբերգական ճակատագրի քաղաքը» (1997), «Սիսիանի բնակավայրերի պատմությունը» (1997), «Սյունյաց ազնվաշնորհ տիկնայք» (1996), «Ականավոր սյունեցիներ» (Սիսիան-1998, Գորիս-2001), «Համո Սահյան բանաստեղծի հավատամքը» (2004), «Մովսես Գ Ամենայն հայոց կաթողիկոս» (2001), «Մարզպան Վասակը պատմիչների (եւ ոչ միայն նրանց) դատաստանի առջեւ» (2004), «Լոր. հնամենի գյուղ, 100-ամյա դպրոց» (2005), «Աշնան արահետ» (բանաստեղծություններ, 2000), «Վարպետ Անդրանիկ» (2001), «Համո Սահյան. կյանքը եւ գործը» (2007):

Խմբագրել, կազմել եւ հրատարակել է Համո Սահյանի «Ինձ բացակա չդնեք» բանաստեղծությունների ժողովածուն (1999, 2003, 2005, 2014), «Համո Սահյան. բանաստեղծը, մտածողը, մարդը» (2001), «Համո Սահյան. գրչի, խոսքի, խղճի կշիռը» (2003) գրքերը, «Համո Սահյան. 60 եւ մեկ հայրեն» պատկերագիրքը (2003), «Համո Սահյան. Դաղձի ծաղիկ» ժողովածուն (2006), «Համո Սահյան. Արցունքով լվացված սերեր» (2007), «Ակսել Բակունց. Մթնաձոր-Կյորես» (2007), Համո Սահյանի, Եղիշե Չարենցի եւ Սայաթ-Նովայի պակերազարդ քառյակներ, Դանիել Վարուժանի «Հարճը» (2007), «Աշոտ Սաթյան-100» (2007), ինչպես նաեւ պատկերազարդ օրացույցներ:

Կազմել եւ թողարկել է Համո Սահյանի բանաստեղծությունների տեքստերով գրված երգերի ձայնասկավառակներ ու նոտագրված ժողովածուներ:

Որպես «Համո Սահյան. գիտամշակութային կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ անց է կացրել բազմաթիվ գիտաժողովներ, գիտական թեզերի պաշտպանություններ, միջոցառումներ Համո Սահյանի գրական ժառանգության եւ անցած ուղու վերաբերյալ, Երեւանի Կասյան փողոցի գրողների շենքի վեմին, որտեղ ապրել է Համո Սահյանը, 2007թ. տեղադրել է հուշաքար:

Ամուսնացած էր, ունի երեք որդի, յոթ թոռ եւ մեկ ծոռ:

Շչորս Դավթյանը «Սյունյաց երկիր» թերթի բարեկամն էր, ժամանակ առ ժամանակ հոդվածներ էր հրապարակում թերթի էջերում եւ հարցազրույցներ տալիս:

Համո Սահյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում տպագրվել էր բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կիմ Աղաբեկյանի հրաշալի հոդվածը Շչորս Դավթյանի մասին՝ «Համո Սահյանի եւ նրա պոեզիայի նվիրյալը» վերտառությամբ (8 ապրիլի 2014թ.):

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմն իր ափսոսանքն է հայտնում Շչորս Դավթյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:

**«Սյունյաց երկիր»**

## Կորստի ցավ ու ափսոսանք ապրեցի՝ լսելով, որ չկա Շչորս Դավթյանը

Իբրեւ պետական-կուսակցական գործիչ՝ այն քիչ լիդերներից էր, որ երբեւէ չի տարվել իր կատարածը գովազդելով: Իրեն տրված պաշտոնն ու ժամանակը նա առավելագույնս է օգտագործել ի նպաստ երկրի շենացմանն ու ժողովրդի բարեկեցության բարձրացմանը: Նա Սյունյաց երկրի մեծ նվիրյալներից էր:

Նույնպիսի նվիրումով ու եռանդով լծված էր նաեւ հայրենի մշակույթին, գրականությանը, լրագրությանը, որտեղ եւս քրտինքը ճակատին աշխատող մշակ էր…

Նման մարդկանց կորստով մեր ապրելաձեւում ինչ-որ բան փոխվում է, մեր միասնական կերպարում ինչ-որ բան խաթարվում… Ափսո՜ս…

Ցավակցում եմ, նաեւ՝ հավատում, որ ժամանակը Շչորս Դավթյանին կդասի Սյունյաց երկրի մեծերի շարքում:

**ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ**
**ք.Մոսկվա**

## «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլը

Կապանի մարմնամարզության դպրոցում մայիսի 28-ին երկրորդ անգամ անցկացվեց Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթի մարզային փուլը: Այս անգամ մրցասպարեզ էին ելել Կապանի N1, Սիսիանի N1, Գորիսի N2, Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի N1 նախադպրոցական ուսումնական հաստատությունների, Մեղրի քաղաքի մսուր-մանկապարտեզի թիմերը:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակը: Միջոցառման մասնակիցներին առաջին հանրապետության տոնի առթիվ շնորհավորեց եւ հաջողություններ մաղթեց Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը՝ կարեւորելով նման մրցույթների դերը դեռահասների մարմնակրթության գործում:

Ի դեպ, մրցույթի համայնքային փուլին մասնակցում էին 29 նախադպրոցական հաստատությունների թիմեր:

Փոքրիկներն իրենց հարաբերությունները պարզեցին հինգ մրցաձեւում՝ փոխանցումավազք արգելքների հաղթահարումով, խաղային փոխանցումավազք, անցում մարմնամարզական օղակների միջով, խաղային փոխանցումավազք թենիսի գնդակներով, հավաքել «Հաղթանակ» բառը: Արդյունքների ամփոփումից հետո պարզ դարձավ, որ հաղթող է ճանաչվել «Գորիսի N2 նախադպրոցական հիմնարկ» համայնքային ոչ առեւտրային կազմակերպությունը (ՀՈԱԿ) (տնօրեն՝ Ժասմենա Խաչատրյան, դաստիարակներ՝ Սոֆի Գրիգորյան, Մերի Հայրապետյան), որ հավաքեց 48 միավոր, երկրորդ հորիզոնականում Քաջարանի թիմն էր (46 միավոր) (տնօրեն՝ Ռուզաննա Առաքելյան, դաստիարակ՝ Տաթեւիկ Սարգսյան), երրորդ տեղը զբաղեցրեց «Կապանի N1 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ը (տնօրեն՝ Քրիստինե Սողոմոնյան, դաստիարակներ՝ Նելլի Թեւանյան, Մերի Բաղդասարյան): Հաղթողն ու մրցանակակիրները պարգեւատրվեցին գավաթով, հավաստագրերով եւ հուշանվերներով: Միջոցառմանն աշխույժ ռիթմեր հաղորդեցին «Վահան Մանուկյան» երգի ստուդիայի սաների կատարումները:

Հաղթող թիմը կմասնակցի մրցույթի հանրապետական փուլին:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Խոսքերի փոխարեն...

**Հունիսի 3-ին Կապանի մշակույթի կենտրոնում կազմակերպված «Խոսքերի փոխարեն…» խորագրով մեծարման եւ հիշատակի երեկոն յուրահատուկ խորհուրդ ուներ: Միջոցառման մասնակիցները հարգանքի տուրք մատուցեցին ապրիլյան ռազմական գործողությունների ընթացքում զոհված կապանցի հերոսներին, այդ ժամանակահատվածում ռազմական դիրքերում ծառայություն իրականացրած կապանցի կամավորականներին, Հայոց բանակին եւ կամավորական ջոկատներին աջակցած մարդկանց ու կազմակերպություններին…**

Երեկոյից առաջ Կապանի ԵԿՄ Կապանի բաժանմունքում Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանից, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանից, Երկրապահ կամավորականների միության Կապանի տարածքային բաժանմունքի ղեկավար Մանվել Օհանյանից, Կապանի զինկոմիսարիատից պատվոգրեր եւ շնորհակալագրեր ստացան ԵԿՄ անդամները, երիտասարդ երկրապահները, կամավոր-աշխարհազորայինները, պահեստազորի սպայակազմի անդամները, ինչպես նաեւ այն անձինք, ովքեր տարբեր աշխատանքներ կատարելու համար գործուղվել էին դիրքեր, նաեւ «Կապանի բժշկական կենտրոն»-ի անձնակազմը:

Սահիկահանդեսով ներկայացվեցին հատվածներ կապանցի կամավորների՝ ռազմաճակատ մեկնելու, այնտեղ կատարած որոշակի գործողություններից: Հանդիսատեսը ծանոթացավ նաեւ ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված հերոսների՝ Գագիկ Փարսադանյանի (Հասան), Արմեն Գասպարյանի (Մակիչ), Նորայր Գասպարյանի կենսագրությանը, իսկ նրանց ընտանիքներին փոխանցվեց կապանցի գեղանկարիչ Ռուբեն Կոստանդյանի (Ուբակ) ձեռամբ արված դիմանկարները:

Սյունիքի փոխմարզպետ Վարդան Դավթյանը երախտագիտության խոսքում ազատամարտիկներին մաղթեց ոգու ամրություն, ուժ ու կորով եւ ցանկություն հայտնեց, որ իրենց արժանիքները միասնականությամբ ու վճռականությամբ փոխանցեն մեր հաջորդ սերունդներին, երիտասարդ ու պատանի երկրապահներին:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանն իր ելույթում շնորհակալություն հայտնեց բոլորին աջակցության ու հայրենիքի հանդեպ ունեցած սրտացավ վերաբերմունքի համար:

Իսկ հայրենիքին ու խաղաղությանը նվիրված կատարումները միջոցառմանը հաղորդեցին ազգի հարատեւության շունչ. թող խաղաղ բացվի երկինքը, որ անհոգ ապրի մանկիկը, որ երբեք էլ չտեսնի արհավիրք…

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## Երախտագիտություն՝ բուժաշխատողներին

Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ խրամատում ժամկետային զինվորի եւ երկրապահ կամավորների կողքին էին «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ բուժաշխատողները: Կրակը դադարեցնելուց հետո բժշկական կենտրոնը շարունակեց բուժօգնությունը դիրքերից վերադարձած կամավորներին, ովքեր առողջական խնդիրներ ունեին: Երկրապահ կամավորների միության Կապանի տարածքային բաժանմունքն իր վերաբերմունքն արտահայտեց Կապանի բժշկական կենտրոնի բուժաշխատողներին:

Մայիսի 27-ին բուժհիմնարկի դահլիճում տեղի ունեցավ պատվոգրերի հանձնման արարողություն: Ներկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին ապրիլյան քառօրյա պատերազմի նահատակների հիշատակը: Կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանն իր խոսքում արժանին մատուցեց դիրքերում կանգնած ժամկետային զինվորին, նրան միացած՝ 1992-94թթ. պատերազմի բովով անցած երկրապահին. *«Շատ էին խոսում, թե երբ վերսկսվեն ռազմական գործողություններ, ո՞վ է զենք վերցնելու, բայց դրանք պարապ խոսակցություններ էին, մեր տեսակն այս անգամ էլ ապացուցեց, որ վճռական պահին բոլորս կարող ենք հավաքվել մի գաղափարի եւ մի նպատակի շուրջ»:*

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը երախտագիտություն հայտնեց Կապանի բժշկական կենտրոնի բուժաշխատողներին:

ԵԿՄ Կապանի տարածքային բաժանմունքի ղեկավար Մանվել Օհանյանը նշեց. *«22 տարի հետո երկրապահներին անհրաժեշտ եղավ կրկին զենքը ձեռքին կանգնել խրամատում: Այդ թեժ օրերին սահման հասան բուժաշխատողները, եւ չեմ կարող երախտագիտությունս չհայտնել Կապանի բժշկական կենտրոնի անձնակազմին՝ տնօրենից մինչեւ բուժքույր ու շտապ օգնության մեքենայի վարորդ: Շնորհակալ եմ արագ արձագանքելու եւ զինվորի կողքին լինելու համար, քանզի մեր կռիվը դեռ չի ավարտվել, մենք դեռ զինվորական համազգեստ ենք կրելու, եւ վստահ եմ, որ դուք մեզ հետ կանգնած եք լինելու խրամատում»:*

Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանն իր խոսքում ընդգծեց այն միտքը, որ դեռեւս 1991 թվականից Կապանի բուժհիմնարկի անձնակազմը մեկ մարդու նման գտնվել է զինվորի կողքին եւ հիշեց, թե ինչ ծանրաբեռնվածությամբ էին աշխատում կապանցի բժիշկները 1992-1994թթ. հայ-ադրբեջանական հակամարտության օրերին՝ դարմանելով հարյուրավոր ազատամարտիկների եւ հրետակոծությունից տուժած խաղաղ բնակիչների վերքերը: *«Շատերը կարող են ասել, որ դա նրանց պարտականությունն է, բայց պարտականությունն էլ պիտի ժամանակին ու հստակ կատարել»,* – ասաց զինկոմը:

Պատանի երկրապահների անունից N10 միջնակարգ դպրոցի զինղեկ, ԵԿՄ Կապանի տարածքային բաժանմունքի «Պատանի երկրապահ» ակումբի հրամանատար Վարդան Ստեփանյանը շնորհակալություն հայտնեց Կապանի բժշկական կենտրոնի անձնակազմին եւ Սմբատ Օրբելյանին հանձնեց ՀՀ երկրապահ կամավորների միության պատվոգիրը՝ ստորագրված ԵԿՄ նախագահ, Արցախի հերոս, գեներալ-լեյտենանտ Մանվել Գրիգորյանի կողմից: Առաջնագծում եւ թիկունքում սերտ համագործակցության համար կենտրոնի մի խումբ բուժաշխատողներ պարգեւատրվեցին Երկրապահ կամավորների միության Կապանի տարածքային բաժանմունքի պատվոգրով:

Ելույթ ունեցողների խոսքում մի մաղթանք էր շրջանառվում՝ ուղղված բուժաշխատողներին. բժշկական ծառայություն իրականացնեք խաղաղ պայմաններում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ò ² ì ² Î ò à ô Â Ú à ô Ü «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը ցավակցում է Սառնակունքի գյուղապետ Մանուչար Մկրտչյանին՝ որդու՝ Միքայելի ողբերգական մահվան առիթով:

ò ² ì ² Î ò à ô Â Ú à ô Ü Կապանի կրթության գործի երախտավոր Անուշավան Ադամյանի մահվան առիթով ցավակցում եմ նրա հարազատներին եւ մտերիմներին:

**ՍԱՖԱՐ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

# «ՖԵՆԻՔՍ» ՀԱՄԱԼԻՐ

• Ýáñ³á× ë»ÝÛ³ ÏÝ»ñ • ÑÛáõñÁÝÏ³É ÙÃÝáÉáñï • ³é³çÝ³Ï³ñ· ëå³ë³ñÏáõÙ









Կապան քաղաքի «Ֆենիքս» համալիրի երրորդ հարկում բացված հյուրանոցն իր հյուրընկալ դռներն է բացել այցելուների առաջ:
Մեկ, երկու տեղանոց, ինչպես նաեւ լյուքս համարները հարմարավետ կահավորանքով Ձեր հանգիստն ավելի հաճելի կդարձնեն:
Հյուրանոցի մեկ համարի գինը, կախված սենյակի կարգից, 20 000-30 000 դրամ է, ներառյալ նախաճաշ, լողավազան, ֆիտնես սրահ:
Այցելուները կարող են օգտվել նաեւ մերսման, գեղեցկության սրահներից, ինչպես նաեւ դիտել ֆիլմեր (3D) ժամանակակից կահավորմամբ կինոդահլիճում:
Մանկական սրճարանում օրն ավելի բովանդակալից կդարձնի հմուտ խաղավարը:
Բացօթյա սրճարանը, հաճելի երաժշտությունը հնարավորության կտան այցելուներին անցկացնել անմոռանալի երեկո:
Փորձառու խոհարարն առաջարկում է ինչպես հայկական ավանդական, այնպես էլ` այլ երկրների խոհանոցների ճաշատեսակներ` գեղեցիկ ձեւավորմամբ ու հաճելի մատուցմամբ:
Էքսկուրսավարը զբոսաշրջիկներին կծանոթացնի Կապանի տարածաշրջանի տեսարժան վայրերին:

Կապան, Արամ Մանուկյան 1-ին նրբ., թիվ 8/3 9 շենք

(093) 44 99 44
(041) 01 11 71

art-sheyping@mail.ru










**Հայտարարություն** Կապանի պետական բժշկական քոլեջը հայտարարում է 2016-17 ուստարվա ընդունելություն` միջնակարգ ընդհանուր կրթության հիմքի վրա /12-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար եւ վճարովի հիմունքով` «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» եւ «Բուժական մերսում» մասնագիտությունների գծով, հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա /9-րդ դասարանի շրջանավարտներ/ անվճար եւ վճարովի հիմունքով` «Մանկաբարձական գործ», «Քույրական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» եւ «Բուժական մերսում» մասնագիտությունների գծով:

«Քույրական գործ» եւ «Մանկաբարձական գործ» մասնագիտությունների ուսման տեւողությունը միջնակարգ /ընդհանուր/ կրթությամբ դիմորդների համար 3 տարի է, իսկ հիմնական ընդհանուր կրթությամբ դիմորդների համար 4 տարի:

«Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» եւ «Բուժական մերսում» մասնագիտությունների ուսման տեւողությունը միջնակարգ /ընդհանուր/ կրթությամբ դիմորդների համար 2 տարի է, իսկ հիմնական ընդհանուր կրթությամբ դիմորդների համար 3 տարի:

Շրջանավարտները ստանում են համապատասխանաբար բուժքրոջ /բուժեղբոր/, մանկաբարձի, դեղագործի, ատամնատեխնիկի, բուժքույր /բուժեղբայր/ - կոսմետոլոգի, բուժքույր /բուժեղբայր/ - մերսողի որակավորում:

Ուսուցումը առկա է /ստացիոնար/, հայոց լեզվով, «Դեղագործություն» մասնագիտությամբ միջնակարգ /ընդհանուր/ կրթությամբ ուսուցումը նաեւ հեռակա ձեւով, որի տեւողությունը 3 տարի է:

Կապանի պետական բժշկական քոլեջի շրջանավարտները դիպլոմ ստանալուց հետո կարող են անմիջապես անցնել աշխատանքի ինչպես հանրապետության, այնպես էլ արտասահմանյան բուժհաստատություններում /քոլեջի ավարտական դիպլոմը ճանաչվում է ԱՄՆ-ի բոլոր նահանգներում, ԱՊՀ-ի բոլոր երկրներում, եվրոպական մի շարք երկրներում/:

Գերազանց եւ բարձր առաջադիմությամբ շրջանավարտներն իրավունք ունեն ուսումը շարունակելու ՀՀ պետական բուհերում համապատասխան մասնագիտության 2-րդ կուրսերում, հեռակա ուսուցմամբ:

Քոլեջ կարող են դիմել նաեւ նախնական մասնագիտական, միջին մասնագիտական եւ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձինք:

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է կենսաբանություն առարկայի ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա, 2016թ. ընդունելության կարգով սահմանված մրցութային հիմունքով ընդունելության քննություններից 8 եւ ավելի միավորներ ստացած դիմորդների միջեւ:

Քոլեջում դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. օգոստոսի 15-ը, աշխատանքային օրերին ժամը 9:00-16:00.

Դիմորդը քոլեջի ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում` օրինական ներկայացուցչի /ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի/ հետ ներկայացնում է`

1) դիմում,
2) կրթության մասին փաստաթղթի բնագիրը,
3) 4 լուսանկար /3X4 սմ/,
4) անձը հաստատող փաստաթուղթ /անձնագիր կամ ծննդյան վկայական մինչեւ 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական/
5) կցագրման վկայական / զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չզորակոչվելը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում/:

Դիմորդն ընդունելության գործընթացի կազմակերպման եւ անցկացման համար քոլեջում նախապես վճարում է 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ:

Քոլեջում ընդունելության քննություններն անց են կացվելու օգոստոսի 18-ից 20-ը:

Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից հետո: Հիմնական ընդհանուր կրթության բազայի վրա ընդունվածներն առաջին տարին կուսումնասիրեն հանրակրթական առարկաներ:

Վճարովի համակարգում սովորողներն առաջին տարում կվճարեն 160.000 դրամ, մնացած տարիներին` ընդհանուր հիմունքներով, որոնց տարեկան չափերն են.

| | |
|---|---|
| *0913.02.5 «Քույրական գործ»`* | *210.000 դրամ,* |
| *0912.02.5 «Մանկաբարձական գործ»`* | *210.000 դրամ,* |
| *0916.01.5 «Դեղագործություն»`* | *210.000 դրամ,* |
| *0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ»`* | *220.000 դրամ,* |
| *0915.01.5 «Բուժական կոսմետոլոգիա»`* | *220.000 դրամ,* |
| *0915.02.5 «Բուժական մերսում»`* | *200.000 դրամ:* |

Քոլեջ ընդունված դիմորդի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:

Քոլեջում ուսանողական նպաստ եւ պետական կրթաթոշակ տալու կարգը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 28.11.2013թ. թիվ 1330-Ն որոշմամբ:

Վճարովի համակարգում սովորող բարձր առաջադիմությամբ ուսանողները կտեղափոխվեն անվճար համակարգ: Անվճար համակարգում սովորողները սահմանված կարգով կստանան կրթաթոշակ: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողովին:

**Հասցեն` ք.Կապան, Շահումյան 37ա:**
**Հեռախոս` 5-25-70, 094-45-99-36:**

**Հայտարարություն** **ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմինը` խորհուրդը, տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար, հայտարարում է մրցույթ:**

Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են`

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը,
2) բարձրագույն կրթությունը,
3) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

**Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են`**

1) դիմում` հաստատության խորհրդի նախագահի անունով,
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի պատճենը,
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն երեք օր առաջ),
5) հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը (դրանց առկայության դեպքում),
6) աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հուլիսի 14-ը ներառյալ, բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 11:00-14:00, Գորիսի N 5 հիմնական դպրոցի շենքում: Հասցե` ք. Գորիս, Ավանգարդ 2/13:

Մրցույթը կանցկացվի 2016 թվականի հուլիսի 25-ին ժամը 16:00-ին, Գորիսի N 5 հիմնական դպրոցի շենքում:

Տեղեկությունների համար զանգահարել (0284) 2-66-41 հեռախոսահամարով:

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է** 3 սենյականոց բնակարան: Հասցե` ք.Կապան, Մուշեղ Հարությունյան 10, 9-հարկանի շենքի 5-րդ հարկ:
Զանգահարել` (094) 421 400:

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր`
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե` Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.` **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ` syuniacyerkir@mail.ru
էլ.կայք` www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը` 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն` ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն` տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը` 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը` 1720, գինը` 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 09.06.2016թ.: